

2022

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏ՝

ՀՀ ԼՈՌՈՒԻ ՄԱՐԶ, ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔ, ՔԱՐԱԶՈՐ
ԲՆԱԿԱՎԱՅՐ, 5-ՐԴ ՓՈՂՈՑ 3/1 և 3/2 ՀՈՂԱՄԱՍԵՐՈՒՄ (6.5 X
8)մ ԱՐՏԱՔԻՆ ՉԱՓԵՐՈՎ ՍԵՊՏԻԿ ՀՈՐԻ, (121,9 X 16.85)մ
ԱՐՏԱՔԻՆ ՉԱՓԵՐՈՎ ԵՐԿՈՒ ՀԱՎԱՆՈՑԻ և 347,7 մ
ԵՐԿԱՐՈՒԹՅԱՄԲ ՊԱՐԻՍՊԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

ՀՀ ԼՈՌՈՒԻ ՄԱՐԶ, Ք. ՍՊԻՏԱԿ, ՇԻՐԱԿԻ ԽՃՈՒՂԻ, ԹԻՎ 155
ՀՈՂԱՄԱՍ ՀԱՍՑԵՆՈՒՄ (6.9 X 16.25)մ ԱՐՏԱՔԻՆ ՉԱՓԵՐՈՎ
ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԱՆՑԱԿԵՏԻ, (121,9 X 16.8)մ ԱՐՏԱՔԻՆ
ՉԱՓԵՐՈՎ ԵՐԿՈՒ ՀԱՎԱՆՈՑԻ և (119,9 X 16.8)մ ԱՐՏԱՔԻՆ
ՉԱՓԵՐՈՎ ԵՐԿՈՒ ՃՏԱՆՈՑԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՑ**

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
«ՄԵԶԻՔ ՌԵՍՈՐՏ» ՍՊԸ**

**ԿԱՏԱՐՈՂ
Ա/Ձ Ա. ԳԱԼՈՅԱՆ**

Ա/Ձ Ա. Գալոյան
ՀՀ ք. Երևան Սևանի 5
Հեռ. բջջ. +374 99 994222
galoyan.aram@gmail.com



ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏ՝

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ, ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔ, ՔԱՐԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐ, 5-ՐԴ ՓՈՂՈՑ 3/1 և 3/2
ՀՈՂԱՄԱՍԵՐՈՒՄ (6.5 X 8)մ ԱՐՏԱՔԻՆ ՉԱՓԵՐՈՎ ՍԵՊՏԻԿ ՀՈՐԻ, (121,9 X 16.85)մ
ԱՐՏԱՔԻՆ ՉԱՓԵՐՈՎ ԵՐԿՈՒ ՀԱՎԱՆՈՑԻ և 347,7 մ ԵՐԿԱՐՈՒԹՅԱՄԲ ՊԱՐԻՍՊԻ
ԿԱՌՈՒՑՈՒՄ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ, Ք. ՍՊԻՏԱԿ, ՇԻՐԱԿԻ ԽՃՈՒՂԻ, ԹԻՎ 155 ՀՈՂԱՄԱՍ ՀԱՍՑԵՈՒՄ (6.9 X
16.25)մ ԱՐՏԱՔԻՆ ՉԱՓԵՐՈՎ
ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԱՆՑԱԿԵՏԻ, (121,9 X 16.8)մ ԱՐՏԱՔԻՆ ՉԱՓԵՐՈՎ ԵՐԿՈՒ ՀԱՎԱՆՈՑԻ և
(119,9 X 16.8)մ ԱՐՏԱՔԻՆ ՉԱՓԵՐՈՎ ԵՐԿՈՒ ՃՏԱՆՈՑԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՑ

«ՍՊԻՏԱԿԻ ԹՈՂՆԱԲՈՒԾԱԿԱՆ ԿՈՄԲԻՆԱՏ»

ՄՊԸ տնօրեն՝

(ստորագրություն, կնիք)

Վ. Գևորգյան



Ա/Ձ ԱՐԱՍ ԳԱԼՈՅԱՆ

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	5
1.1	Ձեռնարկողի մասին տեղեկություն	5
1.2	Հապավումներ	5
1.3	Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը	6
1.4	Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)	8
1.4.1	<i>Ներկա վիճակի նկարագիր</i>	8
1.4.2	<i>Նախատեսվող գործունեության նկարագիր</i>	9
1.5	Էներգախնայողության միջոցառումներ.....	10
1.6	Գլխավոր հատակագիծ.....	12
1.7	Իրադրային հատակագիծ.....	13
1.8	Շինարարական աշխատանքների իրականացման ժամանակացույց	16
1.9	Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգեր.....	17
1.10	Օդափոխության համակարգ.....	17
1.10	Գազամատակարարում.....	17
1.11	Էլ. մատակարարում.....	17
2	ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՊՐՈՑԵՍԻ ԲՆՈՒԹԱԳԻՐ	18
3	ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՄԽԵՄԱՆ	18
2.1	Աշխատանքների կատարման սխեմա.....	20
2.2	Նախապատրաստական փուլ	24
2.3	Շինարարության ժամկետները.....	24
2.4	Հիմնական շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկը.....	24
2.5	Հիմնական շինարարական աշխատանքների և ռեսուրսների ծավալները.....	25
2.5.1	<i>Նյութերի և բնառեսուրսների օգտագործում</i>	25
2.6	Թափոնների կառավարում	26
3	ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԽԵՄԱՆ.....	27
3.1	Ընդհանուր տեղեկություններ ուսումնասիրված տեղամասերի վերաբերյալ	27
3.2	Ջրային ռեսուրսներ.....	28
3.3	Հողեր.....	29
3.4	Կենսաբազմազանություն. Բուսականություն	29
3.5	Կլիմայական պայմաններ.....	33
3.6	Օդային ավազան	38
3.6.1	Ֆոնային աղտոտվածություն.....	38
3.7	Սոցիալ-տնտեսական արդի վիճակը.....	39
3.8	Բնական և մշակութային ժառանգություն	44
4	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ.....	46
4.2	Ռիսկերի գնահատում	46
4.3	Արտանետումների աղբյուրները	46
4.4	Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն	47
4.4.1	<i>Մթնոլորտային օդ</i>	47
4.4.2	<i>Ջրային ռեսուրսներ</i>	47
4.4.3	<i>Հողային ռեսուրսներ</i>	47
4.4.4	<i>Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը</i>	48
4.4.5	<i>Հակահրդեհային միջոցառումներ</i>	49
4.4.6	<i>Աղմուկ և թրթռում</i>	49
4.4.7	<i>Բուսական աշխարհի պահպանության միջոցառումները</i>	50
4.4.8	<i>Կենդանական աշխարհի պահպանության միջոցառումներ</i>	51

4.4.9 *Թափոնների կառավարում*51

4.4.10 *Էներգախնայողության միջոցառումներ*52

5 ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ52

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ54

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ.....58

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ60

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ61

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 Ձեռնարկողի մասին տեղեկություն

Ձեռնարկող`	«ՍՊԻՏԱԿԻ ԹՌՉՆԱԲՈՒԾԱԿԱՆ ԿՈՄԲԻՆԱՏ» ՍՊԸ
Ձեռնարկողի հասցեն`	ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ, Ք.ՍՊԻՏԱԿ, ՇԻՐԱԿԻ ԽՃՂ. 144
Նախատեսվող գործունեության հասցեն`	ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ, ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔ, ՔԱՐԱԶՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ, Ք. ՍՊԻՏԱԿ, ՇԻՐԱԿԻ ԽՃՈՒՂԻ, ԹԻՎ 155 ՀՈՂԱՄԱՍ
ՇՄԱԳ նախագծի մշակող`	Ա/Չ Արամ Գալոյան
Հեռախոս`	+37499994222

1.2 Հապավումներ

ՀՀ` Հայաստանի Հանրապետություն

ՓԲԸ` Փակ Բաժնետիրական Ընկերություն

ՍՊԸ` Սահմանափակ պատասխանատվությամ ընկերություն

ՊՈԱԿ` պետական ոչ առևտրային կազմակերպություն

1.3 Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

Գործունեության նպատակն է ՀՀ Լոռու մարզ, Ք. Սպիտակ և Քարաձոր բնակավայրում իականացնել արտադրական օբյեկտի կառուցման աշխատանքները:

2014թ.-ի հունիսի 21-ի "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

Արտադրական օբյեկտի աշխատանքային նախագիծը իրականացված է ՀՀ-ում գործող նորմատիվ փատաթղթերի պահանջներին համապատասխան¹:

Արտադրական օբյեկտի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը մշակված է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի պահանջներին համաձայն:

Բնապահպանական ազդեցության գնահատման այս զեկույցը նկարագրում է գործունեության ենթակա տարածքի բնապահպանական ելակետային պայմանները, գործունեության իրականացման համար նախատեսվող աշխատանքները և գործողությունները, գործունեության իրականացման արդյունքում բնապահպանական հնարավոր ազդեցության շրջանակը և գնահատականը:

Սկսած 1991թ. շրջակա միջավայրի պահպանությանն առնչվող ավելի քան 25 օրենսգրքեր և օրենքներ, բազմաթիվ ենթաօրենսդրական ակտեր և կանոնակարգեր են ընդունվել:

Շրջակա միջավայրի պահպանության հարցերին առնչվող ՀՀ օրենքների ցանկը ներկայացված է ստորև.

- Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին (1992),
- Մթնոլորտային օդի պահպանության մասին (1994),

¹ ՀՀՇՆ 30-01-2014 ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ. ՔԱՂԱՔԱՅԻՆ ԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՈՅՐԵՐԻ ՀՍՏԱԿԱԳԾՈՒՄ ԵՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՒՄ
 ՀՀՇՆ 31-01-2014 ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԵՐ. ՄԱՍ1 .ԲԱԾՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԵՐ
 ՀՀՇՆ 21-01-2014 ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ
 ՀՀՇՆ IV-11.03.03-02 ԱՎՏՈՎԱՅՆԱՍՏԵՂԻՆԵՐ
 ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ 2020Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի ԹԻՎ 102-Ն ՀՐԱՄԱՆ
 ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2021Թ. ՄԱՐՏԻ 31 ԹԻՎ 372-Ն ՀՐԱՄԱՆ

- Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին (2014),
 - Պատմական և մշակութային անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին (1998),
 - ՀՀ հարկային օրենսգիրք (ՀՕ-165-Ն, 01.01.2018թ.)
 - «ՀՀ Բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 14.08.2008 N 967-Ն որոշում
 - «Բուսական աշխարհի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, 1999թ., ՀՀ կառավարության 29.01.2010թ.
 - Բնապահպանական եվ բնօգտագործման վճարների մասին (1998)
 - Կենդանական աշխարհի մասին (2000),
 - ՀՀ հողային օրենսգիրք (2001),
 - Բնապահպանական կրթության մասին (2001),
 - ՀՀ ջրային օրենսգիրք (2002),
 - ՀՀ ընդերքի մասին օրենսգիրք (2011),
 - Թափոնների մասին (2004),
 - Բնապահպանական վերահսկողության մասին» (2005),
 - Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին (2006),
 - ՀՀ անտառային օրենսգիրք (2005),
 - ՀՀ Կառավարության «ՀՀ կենդանիների Կարմիր գրքը հաստատելու մասին» 29.01.2010թ. N 71-Ն որոշում,
 - ՀՀ Կառավարության «ՀՀ բույսերի Կարմիր գրքը հաստատելու մասին» 29.01.2010թ. N 72-Ն որոշում,
 - «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» ՀՀ Կառավարության 31.07.2014թ. N 781-Ն որոշում
 - Հրաման N2-III-11.3 «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» սանիտարական նորմերը հաստատելու մասին: Ուժի մեջ է մտել 13.04.2002թ:
 - ՀՀ կառավարության նիստի 23 փետրվարի 2017 թվականի N 8 արձանագրության քաղվածք
 - «Կառավարության «Ջրակոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի և անօտարելի գոտիների տարածքների սահմանման չափորոշիչների մասին» 2005թ.-ի հունվարի 20-ի N 64-Ն որոշում
- Հաշվի են առնվել նաև`
- ՀՀ կառավարության 2014թ. սեպտեմբերի 25 որոշումը «ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության եվ օգտագործման բնագավառում պետական ծրագիրը եվ միջոցառումները հաստատելու մասին»
 - ՀՀ կառավարության 2015 թ. դեկտեմբերի 10-ի նիստի «ՀՀ կենսաբանական բազմազանության պահպանության, պաշտպանության, վերարտադրության և

օգտագործման բնագավառներում ռազմավարությանը և գործողությունների ազգային ծրագրին հավանություն տալու մասին» N54 որոշում

- ՀՀ կառավարության 2015թ. մայիսի 27-ի նիստի «ՀՀ անապատացման դեմ պայքարի ռազմավարությունը և գործողությունների ազգային ծրագրին հավանություն տալու մասին» N23 արձանագրային որոշումը:
- ՀՀ կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին» N1059-Ա որոշումը:
- ՀՀ կառավարության 2018 թվականի փետրվարի 08-ի N108-Ն որոշումը:

1.4 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)

1.4.1 Ներկա վիճակի նկարագիր

Կառուցապատման ենթակա հողատարածքները գտնվում են ՀՀ Լոռու մարզ, ք. Սպիտակ, Շիրակի խճուղի 144 և ՀՀ Լոռու մարզ, Սպիտակ համայնք, Քարաձոր բնակավայր, 5-րդ փողոց 3/1 և 3/2 հասցեներում, հողամասերը սահմանակից են: Հողամասերիի տրանսպորտային մոտեցումը ապահովված է համայնքային ճանապարհներով:

Հողատարածքները ազատ են կառուցապատումից: Մոտակայքում այլ բնակելի կամ արտադրական շենք-շինություններ չկան:

Հողտարքների բնութագիր`

1. մակերես` 0.30275հա, կադաստրային ծածկագիր` 06-109-0202-0059
2. մակերես` 1.14008հա, կադաստրային ծածկագիր` 06-109-0202-0067
3. մակերես` 3.63811հա, կադաստրային ծածկագիր` 06-006-0202-0022

Նպատակային նշանակությունը` արդյունաբերության, ընդերքօգտագործման եւ այլ արտադրական նշանակության

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը` Գյուղատնտեսական արտադրական օբյեկտների

Գրանցված իրավունքի տեսակը` ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ըստ երկրաբանական հետազննության արդյունքների տարածքը, ընդհանուր առմամբ, պիտանի է շինարարության համար:

Կառուցապատման ենթակա հողատարցքում բացակայում են բնության հատուկ պահպանվող կամ պատմամշակութային հուշարձանների տարածքներ:

Հողային ծածկույթի վրա, որտեղ բուսահողի հզորությունը 0.7 մ է, տարածված է ամբողջ տարածքի վրա:, Ամբողջ հողամասում բուսահողի ծավալը գնահատվել է մոտ 3500մ³:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո բուսահողի կոգտագործվի տարածքի բարեկարգման համար:

1.4.2 Նախատեսվող գործունեության նկարագիր

ՀՀ Լոռու մարզ, ք. Սպիտակ, Շիրակի խճուղի 155 հողամաս

ՀՀ Լոռու մարզի ք Սպիտակ , Շիրակի խճուղի թիվ 155 հողամաս հասցեում, (6.9 x 16.25) մ արտաքին չափերով սանիտարական անցակետ, (121.9 x16.8)մ արտաքին չափերով երկու հավանոցի և (119.9 x 16.8) մ արտաքին չափերով երկու ճտանոցի կառուցման նախագիծը մշակվել է 01.03.2022 թ. -ին ՀՀ ք Սպիտակի քաղաքապետարանի կողմից 03.03.2022թ. տրված N 1 ճարտարապետահատակագծային առաջադրանքի, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ. 06-006-0202-0022 վկայականի հիման վրա:

Սույն նախագծով նախատեսվում է տվյալ հողամասի սահմաններում կառուցել սանիտարական անցակետ 96.2մ², երկու հավանոց 2047,92 մ² և երկու ճտանոց 2014,32մ² կառուցապատման մակերես ունեցող հինգ շինություններ, պարիսպ 254.29մ երկարությամբ, 50,858 մ² մակերեսով: Կառուցվող շինությունները նախատեսվում է իրականացնել մեկ հարկանի:

Շինությունների 0,00 նիշը ընդունում ենք պամանական յուրաքանչյուր շինության առաջին հարկի հատակի նիշը:

Հիմքերը - ժապավենաձև ե/ մետոնե հիմնային հեծան, ե/բ բաշմակներ ամեն սյունի տակ և բուտաբետոն ամեն ե/բ բաշմակի տակ խորությունը կախված գրունտներից նախապատրաստական շերտի վրա 100 մմ հաստության պատերը - տուֆ քարի բլոկներից 40 սմ հաստությամբ և բետոնե բլոկներից

Հատակները - Կերամիկական սալիկներ, բետոնե հատակ

Տանիքը - երկլանջ, ծածկույթը տանիքի մետաղական ցինկապատ թիթող և սենդվիչ պանելներ

Պատուհանները , դռները - անհատական պատվերով 'Եվրոստան' տիպի , մղֆ-տիպի և մետաղական

Ծածկերը - Ծածկի անցքավոր սալեր 220 մմ ըն միաձույլ 120 մմ

Ջրահեռացումը - կազմակերպված է

Նախագիծը մշակված է ՇՆՈԻԿ-ի պահանջներին համապատասխան հաշվի են առնված պատվիրատուի ցանկությունները և պահանջները:

ՀՀ Լոռու մարզ, Սպիտակ համայնք, Քարաձոր բնակավայր, 5-րդ փողոց 3/1 և 3/2 հողամասեր

ՀՀ Լոռու մարզի ք Սպիտակ Համայնք , Քարաձոր բնակավայր (6.5 x 8) մ արտաքին չափերով սեպտիկ հորի, (121.9 x16.8)մ արտաքին չափերով երկու հավանոցի և 347,7 մ երկարությամբ պարիսպի կառուցման նախագիծը մշակվել է 03.03.2022 թ. -ին ՀՀ ք Սպիտակի քաղաքապետարանի կողմից 24.03.2022թ. տրված N3 ճարտարապետահատակագծային առաջադրանքի, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.06-109-0202-0059 և 06-109-0202-0067 վկայականների հիման վրա:

Սույն նախագծով նախատեսվում է տվյալ հողամասի սահմաններում կառուցել սեպտիկ հոր 52մ², երկու հավանոց 2047,92 մ² կառուցապատման մակերես ունեցող երեք շինություններ:

Կառուցվող շինությունները նախատեսվում է իրականացնել մեկհարկանի և ստորգետնյա սեպտիկ հոր:

Շինությունների 0,00 նիշը ընդունում ենք պայմանական յուրաքանչյուր շինության առաջին հարկի հատակի նիշը:

Հիմքերը - ժապավենաձև ե/բետոնե հիմնային հեծան, ե/բ բաշմակներ ամեն սյունի տակ և բուտաբետոն ամեն ե/բ բաշմակի տակ՝ խորությունը կախված գրունտներից նախապատրաստական շերտի վրա 100 մմ հաստության

Պատերը - տուֆ քարի բլոկներից 40 սմ հաստությամբ և բետոնե բլոկներից

Հատակները - Կերամիկական սալիկներ, բետոնե հատակ

Տանիքը - երկլանջ, ծածկույթը տանիքի մետաղական ցինկապատ թիթղ և սենդվիչ պանելներ

Պատուհանները , դռները - անհատական պատվերով՝ Եվրոստան՝ տիպի, մոֆ-տիպի և մետաղական

Ծածկերը - Ծածկի անցքավոր սալեր 220 մմ ըն միաձույլ 120 մմ

Ջրահեռացումը - կազմակերպված է

Նախագիծը մշակված է ՇՆՈՒԿ-ի պահանջներին համապատասխան հաշվի են առնված պատվիրատուի ցանկությունները և պահանջները:

Տեխնիկատնտեսական ցուցանիշներ

- Կառուցապատման ենթակա տարածքի մակերես՝ 5.08094հա
- Կառուցապատման մակերես՝ 6246.685մ²

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը մաքրել շինարարական աղբից և բարեկարգել:

Արտադրական օբյեկտը կահավորված է լինելու ցնցուղարանո, զուգարանով և աշխատակիցների համար հանգստի սենյակով:

Նախատեսվող գործունեությունը իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություններ: Այն ներդաշնակ է շրջակա կառույցներին տվյալ միջավայրում և չի հանդիսանում վիզուալ տեսադաշտի խոչնդոտ շրջակա բնակչության համար:


1.5 Էներգախնայողության միջոցառումներ

Էներգախնայողության նպատակով շենքում նախատեսված են հետևյալ միջոցառումները


- Ջերմային կորուստների նվազեցման նպատակով խողովակաշարերի և օդատարների համար կիրառվում են բարձր արդյունավետության ջերմամեկուսիչներ
- Արտաքին կոնստրուկցիաների ջերմամեկուսացում.
- Օդատարների ջերմամեկուսացում ժամանակակից ջերմամեկուսիչ նյութերով.

- Ջերմային կորուստների նվազեցման նպատակով կիրառվում են բարձր արդյունավետության ջերմամեկուսիչներ /пенopleкс/:
- Օդափոխության համակարգում բարձր արդյունավետությամբ ղեկավարվող ջերմափոխանակիչների կիրառում:

1.6 Գլխավոր հատակագիծ





1.7 Իրադրային հատակագիծ



				ԲՆ. ԱՌՈՒՄ ԱՆՈՒՅ, Զ. ՄՈՒՏԱԿ, ԺԻՐԱԿԻ ԿՆՃՈՒՄ, ԹԻՎ 155 ԲՈՒՄԱՆԱ ՔԱՆՁՈՒՄ (8.9 X 16.25)Մ ԱՐՏԱՅԻՆ ՍՈՒԹՈՒՎ ՄԱՍԻՏԱՐԱԿԱՆ ԱՆՔԱԿՈՏԻ, (121.9 X 16.8)Մ ԱՐՏԱՅԻՆ ՍՈՒԹՈՒՎ ԵՐԿՐԻ ՔԱՎԱՆՈՒՄ Լ (119.9 X 16.8)Մ ԱՐՏԱՅԻՆ ՍՈՒԹՈՒՎ ԵՐԿՐԻ ԾՏԱՆՈՒՄ, ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԵՆՔԱԿԱՑՄԱՆ՝ 250 ԿՎՏ ԲՈՒՄՈՒՐՔԱՆՔ Լ 254.29 Մ ԵՐԿՐԱՐՈՒՐՔԱՆՔ ԴԱՐՄԱՒԻ ԿԱՌՈՒՄԱՆ ԱՆՔԱԿԱՑԻՑ			
ԼՎՃ	Ս. ԷՂՅԱՆ			ՃԱՐՏԱՐԱՐՈՅՑԱԿԱՆ ՄԱՍ	ՓՈՒԼ	ԹԻՌԵ	ԹԵՐԵՐ
ԼՍԱՍՈՑԵ	Ս. ՄԱՐԳՐԵՍԻ				ՃԼ	2	102
ԱՍՈՒԳՅԵ	Կ. ԳՐԻԳՈՐԵԱՆ			ԻՐԱՎԱՅԻՆ ԿԱՅՈՒՐՈՒՄ Մ 1:1000	• ՄԱՐԳՐԵՍԱՆ ԲՈՒՄՈՒՎ ԳՈՒՐՄ ԿՈՒՑ		

ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ
Մ 1:1000





1.8 Շինարարական աշխատանքների իրականացման ժամանակացույց

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

	ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՐ																			
	36 ՕՐ	36 ՕՐ	36 ՕՐ	36 ՕՐ	36 ՕՐ	36 ՕՐ	36 ՕՐ	36 ՕՐ	36 ՕՐ	36 ՕՐ	36 ՕՐ	36 ՕՐ	36 ՕՐ	36 ՕՐ	36 ՕՐ	36 ՕՐ	36 ՕՐ	36 ՕՐ	36 ՕՐ	36 ՕՐ
ՆԱԽԱՑԵՆԱԿՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ																				
Տարածքի նախապատրաստում, հողային աշխատանքներ	///																			
Հիմքերի փոտրակների քանդում, հիմքերի բետոնացում	///	///	///																	
Հողի հետլիցք, հարթեցնող շերտի իրականացում			///	///																
Մետաղական կարկասի իրականացում					///	///	///	///	///											
Ե/Ք էլեմենտների իրականացում							///	///	///	///										
Ներքին աստիճանավանդակի իրականացում									///	///										
Տանիքի իրականացում										///	///	///								
Ներքին և արտաքին պատերի իրականացում											///	///	///	///	///	///				
Ինժեներական կոմունիկացիաների կազմակերպում														///	///	///	///	///	///	
Հարդարման աշխատանքներ, տարածքի բարեկարգում																///	///	///	///	///

ՇՐՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՏԵԿՆՈՂՈՒԹՅՈՒՆԸ` 720 ՕՐ (2 ՏԱՐԻ)

1.9 Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգեր

Արտադրական օբյեկտի ջրամատակարարումը նախատեսվում է իրականացնել խորքային հորից, օրենքով սահմանված կարգով ՀՀ Շրջակա միջավայրի նախարարությունից ջրօգտագործման թույլտվություն ստանալուց հետո:

Արտադրական օբյեկտի ջրամատակարարման և կոյուղու նախագիծն իրականացված է պավիրատուի պատվերին և գործող շինարարական նորմերին ու կանոններին համապատասխան:

Նախագծում նախատեսված է ներքին ջրամատակարարումն իրականացնելու համար նախագծել ջրագիծ Փ63–20 տրամագծով պոլիպրոպիլենային խողովակներով:

Ջրագծի ելակետային աղբյուր է հանդիսանում արտաքին մասում նախագծվող պոլիէթիլենային ջրագիծը: Միացման կետերում տեղադրվող փականային հորերում տեղադրվում է սողնակային փականներ:

Ներքին ջրամատակարարումն իրականացվում է պոլիպրոպիլենային Փ63–20 խողովակներով, իսկ կանգնակները նախատեսված է Փ25 խողովակներով: Ներքին տեղամասի խողովակները մոնտաժվում են վերգետնյա կամ ստորգետնյա եղանակով: Տաք ջրամատակարարումն իրականացվում է տեղադրվող էլեկտրական արագ ջրատաքացուցիչներով:

Սանիտարական սարքավորումներից կոյուղահոսքն ու ավելորդ ջրերը հեռանում են նախատեսված կանգնակների միջոցով, որոնք էլ միանում է արտաքին նախագծվող, կառուցվող ԿԴՀ-1-19 դիտահորերին, այնուհետև միանում է կառուցվող 6.6մ * 8.5մ * 3.4մ չափսերով սեպտիկ հորին: Կոյուղահոսքը ուղղված է դեպի կառուցվող սեպտիկ հոր, սեպտիկ հորը պարբերաբար կդատարկվի մասնագիտացված ընկերության կողմից, պայմանագրային հիմունքներով:

Կոյուղագծի ներքին տեղամասի խողովակները մոնտաժվում են վերգետնյա կամ ստորգետնյա եղանակով պոլիվինիլքլորիդե Փ110–50 խողովակներով, իսկ արտաքին կոյուղագծերը մոնտաժվում են ստորգետնյա եղանակով պոլիէթիլենային ծալքավոր SNI տիպի Փ150-250 խողովակներով: Կոյուղու խողովակների կցվող միացություններում հարկավոր է օգտագործել ռետինե սեղմող օղակներ, իսկ հիմքերում արված անցքերում, որոնցով անցնում են խողովակները տեղադրել պողպատե աաշտպանիչ պատյաններ և լցնել չայրվող էլաստիկ նյութով: Ջրագծի և կոյուղու համակարգերի մոնտաժումն ու փորձարկումը կատարվում է համապատասխան աշխատանքի արտադրության գործող նորմերի ու կանոնների ՇՆուԿ 3,05.01-85:

1.10 Օդափոխության համակարգ

Շինությունների օդափոխությունը նախատեսված է բնական եղանակով՝ հորանների միջով Մ125մմ և Մ100մմ օդատարերով:

1.10 Գազամատակարարում

Գազամատակարարումն չի նախատեսվում:

1.11 Էլ. մատակարարում

Արտադրական օբյեկտի էլեկտրամատակարարման համար նախատեսվում է տեղադրել 250ԿՎԱ հզորության 10/0.4 ԿՎ տրանսֆորմատորային ենթակայան: Մնումն կիրականացվի ՄՂԻՏԱԿ 110/35/10կվ ԵԿ-ի Թռչնաբուժական 10կվ օդային գծի թիվ 51

հենարանից ճուղավորումով՝ կառուցելով 10կվ էլեկտրոհաղորդման գիծ /տեխնիկական պայմանը կցված հավելվածների բաժնում/:

2 ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՊՐՈՑԵՍԻ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Սպիտակի Թռչնաբուծական Կոմբինատ ՍՊԸ-ն պլանավորում է իրականացնել ներդրումային ծրագիր, որը վերաբերվում է մայրական կազմի սեփական տնտեսության ստեղծմանը, ինչը ընկերությանը կապահովի սեփական արտադրության ինկուբացիոն ձևով:

Մայրական կազմի տոհմային ճտերը ձեռք են բերվելու Եվրոպայից, խմբաքանակներով, յուրաքանչյուր ճտանոցի համար մոտ 10 000 հատ (ընդհանուր 20 000 հատ). Թռչունը մինչև 120 օրեկան պահվում են ճտանոցներում այնուհետև տեղափոխվում են համապատասխան 2 հավանոցը՝ յուրաքանչյուրում մոտ 9 000 հատ (ընդհանուր մոտ 18 000 հատ՝ հաշվի առնելով թռչունի անկումները). Հավանոցներում սկսած մոտ 180 օրեկանից հավերը սկսում են ձու ածել: Նշված ձուն համարվում է ինկուբացիոն ձու, օրեկան կտրվածքով տեղափոխվում է ՍԹԿ ՍՊԸ ին պատկանող ինկուբատոր, 21 օր ինկուբացվում է և ստացվում է 0 օրեկան բրոյլերի ճուտ:

Հավի ածի շրջանը տևում է մինչև մոտավորապես 420-430 օրեկանը այնուհետև հավերը ուղարկվում են մորթի:

Ճտանոցների թռչունը առաջին երկու հավանոց տեղափոխելուց հետո, ճտանոցները մաքրվում են, լվացվում և ախտահանվում այնուհետև լցվում են նոր խմբաքանակի տոհմային ճտերով, որոնք էլ 120 օրեկան դառնալուց հետո տեղափոխվում են երրորդ և չորրորդ հավանոց: Երրորդ և չորրորդ հավանոցը թռչունով համալրելու պրոցեսը համակնում է առաջին և երկրորդ հավանոցի թռչունը դատարկելու հետ: Հավանոցները նույնպես դատարկվելուց հետո մաքրվում են, լվացվում և ախտահանվում՝ սպասելով նոր խմբաքանակ թռչուն ընդունելուն: Այնուհետև նշված պրոցեսները կրկնվում են՝ ապահովելով արտադրության անընդհատությունը:

3 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՄԽԵՄԱՆ

Որպես շինհրապարակ դիտարկվելու է ամբողջ հողատարծքը:

Ելնելով առկա պայմաններից շինությունները բացի շինարարական նորմերով տրված անվտանգության հրահանգներից, անհրաժեշտ է կազմակերպել և աշխատանքների կատարման նախագծում արտացոլել անվտանգության նորմերի անհատական մոտեցումներ հատկապես կապված կռունկի գործողության գոտում կատարվելիք շին. մոնտաժային աշխատանքների վերաբերյալ:

Շին. մոնտաժային աշխատանքները պետք է կատարել պահպանելով շինարարական նորմաները, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարության իրականացման որակի չափանիշները հսկվում են տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից, հատկապես ակտավորելով թաքնված աշխատանքների իրականացումը, գրանցելով վարման մատյանում:

Շին. հրապարակը կազմակերպելիս պետք է ղեկավարվել քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից տրված հրահանգների:

Շին. հրապարակը կոմպլեկտավորվում է հակահրդեհային ինվենտարով:

Շինարարության ընթացքում անհրաժեշտ է կատարել միջոցառումներ գերծ պահելու շրջակա միջավայրը աղտոտումից, թունավոր արտաթորումներից:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

1©Աշխատանքների բնույթից ելնելով^ա բանվորական բրիգադները ձևավորվում են որպես բազմապրոֆիլ կամ մասնագիտացված:

2©Բազմապրոֆիլ բրիգադները նպատակահարմար է կազմավորել խոշորացված (ընդհանրացված) տիպի ավարտուն շինարարական արտադրանքի« աշխատանքների ընդհանրացված փուլի» կոնստրուկտիվ հանգույցի ստեղծման նպատակով:

3©Բրիգադների քանակական և մասնագիտական - որակական կազմը սահմանվում է աշխատանքների ծրագրված ծավալների« աշխատատարության և աշխատանքների կատարման ժամկետների հիման վրա:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1©Բանվորների աշխատանքի պաշտպանությունը ապահովվելու է անհատական պաշտպանության միջոցների կիրառմամբ (հատուկ արտահագուստ« կոշիկ)« շենքի պաշտպանության միջոցառումների կատարումով (ցանկապատում« լուսավորում« օդափոխում« պաշտպանիչ և արգելակիչ սարքեր և հարմարանքներ և այլն)« սանիտարակենցաղային շինություններով և սարքավորումներով^ա գործող նորմերին և կատարվող աշխատանքների բնույթին համապատասխան

2©Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

3©Աշխատանքի պաշտպանության^ա անվտանգության տեխնիկայի« արտադրական սանիտարահիգիենիկ միջոցառումների և հակահրդեհային անվտանգության վերաբերյալ անց է կացվելու հրահանգում: Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

4.Բանվորների անվտանգության տեխնիկայի ուսուցման« հրահանգման ժամանակին և որակով անցկացման« անհատական պաշտպանական միջոցների վիճակի և կիրառման« արտադրական անվտանգության և արտադրական սանիտարահիգիենիկ անվտանգության

հետ կապված բոլոր միջոցառումների կատարման հսկողությունը վերապահվում է աշխատանքներն իրականացնող կազմակերպությանը:

Անհրաժեշտ է ավելի հետևողական մշտադիտարկումներ իրականացնել շինարարական գործունեության ոլորտում՝ արձանագրելով շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների հնարավոր անհամաչափությունները:

Իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքում կառուցապատողի կառաջնորդի Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներով:

2.1 Աշխատանքների կատարման սխեմա

Նախագծի շինարարության կազմակերպումը մշակված է ՀՀՇՆ 3. 01.01.2008-ի դրույթներով: Շին աշխատանքների իրականացման համար նախատեսում է 2 փուլ՝ նախապատրաստական և հիմնական, ընդհանուր տևողությունը 24 ամիս: Նախապատրաստական փուլում կատարվում են հետևյալ աշխատանքները.

- Շին. հրապարակի ժամանակավոր ցանկապատում հետիոտն գլխածածկույթով
- Ժամանակավոր էլեկտրոմատակարարում և ջրամատակարարում
- Շին. նյութերի և բետոնի ընդունման հարթակների պատրաստում
- Շին.հրապարակի գիշերային լուսավորվածություն

Հիմնական փուլում կատարվում է մասնաշենքերի շինարարությունն՝ ըստ նշված ժամանակացույցի և օրացույցային գրաֆիկի:

Հողային աշխատանքները փոստրակում և խրամուղիներում կատարվում են “հետ-բահ” էքսկավատորով:

Բոլոր տիպի շինարարական աշխատանքները անհրաժեշտ է կատարել պահպանելով անվտանգության տեխնիկայի կանոնները ըստ ՇՆԵՎԿ III-IV.2008-ի դրույթներով, ինչպես նաև աշխատանքների կատարման նախագծում նշված լրացուցիչ միջոցառումներով:

Հիմքերը տեղադրելուց առաջ հիմնատակը պետք է ընդունվի երկրաբանի կողմից հաստատված ակտով (բաց փոստրակի ընդունման ակտ):

Հաշվի առնելով տեղանքի սուղ պայմանները, անհրաժեշտ է կազմակերպել անվտանգության տեխնիկայի կանոնների իրականացման համալիր մշակում՝ ղեկավարվելով ՀՀՇՆ III-IV.2008-ի դրույթներով: Բեռի ուղղահայաց և հորիզոնական տեղափոխությունները պետք է կատարվեն ազդարարի ազդանշանին համապատասխան, պահպանելով անվտանգության գոտու սահմանները, ինչպես նաև բեռի անկման հորիզոնական տեղափոխությունը:

Ապրանքային բետոնը մատակարարվելու է շինհրապարակ պատրաստի տեսքով, մասնագիտացված ընկերության կողմից:

Շինարարության ընթացքում այլ անձանց իրավունքների սահմանափակումը հետևում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:


Ամբողջ շինարարության ընթացքում միջոցառումներ իրականացնել շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ: Փոշուց զերծ մնալու համար տարածքը մշտական խոնավ պահել և ապահովել ոռոգման ջրով:

Թույլ չտալ նորմայից ավել վնասակար արտանետումներ դեպի մթնոլորտ, շին. մեքենաները շին. հրապարակ պետք է մտնեն և դուրս գան մաքուր վիճակով: Բնահողով բարձրված մեքենաների թափքը պետք է թրջել և ծածկել պոլիէթիլենային թաղանթներով թույլ չտալով փոշու ամպի գոյացություններ: Երեկոյան ժամերին դադարեցնել աղմկոտ աշխատանքների կատարումը: Պարբերաբար, և ըստ անհրաժեշտության, կկազմակերպվի շինարարական աղբի տեղափոխում թափոնատեղ:

Բոլոր բնապահպանական միջոցառումները ներառվել են Նախնական գնահատման հայտի հաջորդ բաժիններում՝ բնապահպանական միջոցառումների ծրագրում և բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում:

Ստորև ներկայցվում է շինհրապարակի գլխավոր հատակագիծը:

ՇԻՆՋՐԱՊԱՐԱԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ



ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

1. ՇԻՆ. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՍԿՍԵԼ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՇԻՆ. ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ԱՍԱՍԼՈՒՑ ԴԵՏՈ
2. ՀԱԿԱՅՐԴԵՀԱՅԻՆ ԱՆԿՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԿՐՈՒՄ Է ՇԻՆ-ՈՒԹՅԱՆ ԴԵԿԱԿԱՐԸ ԿԱՄ ՆՐԱՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ ԱՆՁԸ
3. ՇԻՆ. ՀՐԱՊԱՐԱԿԸ ՊԵՏՔ Է ԿՈՄՊԼԵԿՏԱԿՈՐԵԼ ԿՐԱԿԱՐԻՉՆԵՐՈՎ

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ


- ԱԿՏՈՍԱԲԱՐՁԻՉ ԽԻ-5576Ձ ՊԱՅԵՍՆԵՐ
- ԲԵՏՈՆԵ ԸՆԴՈՒՆՄԱՆ �ՈՒԿԵՐ
- Ե/Բ ԿՈՆՍՏՐՈՒԿԹԻՄՅԻ ՊԱՅԵՍ
- ԱՎԱԶԻ ԽՃԻ ՊԱՅԵՍ
- ԷԼ. ԿԱՀԱՆԱԿ
- ԼՈՒՄԱՐՁԱԿ
- ԱՇԴԵԿԻ ՍԵՆՅԱԿ

ՎԵՐԱՆՈՒՄ ԲՆԱՎՈՒՄԻ ԿՐՈՒՄԻ ԿՐԱԿԱՐԻՉՆԵՐԻ

N	Վերանայ	Քանակ	Չափը	Տեսակը	Մակերեսը
4	Ալյումին. սեյսի	1	6x3x2.5	շրջափայտ	18.0
5	Վանդակաբաժն	1	10x3.2x2.5	կտրվածքով	32.0
6	Մեծի ընդուն. սեյսի	1	10x3.2x2.5	կտրվածքով	32.0
7	Նրբաբանված/կտրվածքով սեյսի	1	6x3x2.5	շրջափայտ	18.0
8	Տեյ. կաղնի սեյսի	1	6x3x2.5	շրջափայտ	18.0

							ՀՀ. ԼՈՒՈՒՄ ԱՄՐՉ. Ք. ՍՊԻՏԱԿ, ՇԻՐԱԿԻ ԽՃՈՐԻԻ, ԹԻՎ 155 ՀՈՂԱՄԱՍ ՀԱՍՑԵՆՈՒՄ (6.9 X 16.25)Մ ԱՐՏԱՔԻՆ ՉԱՓԵՐՈՎ ԱՄԼԻՏԱՐԱՄԱՆ ԱՆՑԱԿԵՏԻ, (121,9 X 16.8)Մ ԱՐՏԱՔԻՆ ՉԱՓԵՐՈՎ ԵՐԿՈՒ ՀԱՎԱՆՈՑԻ Ա. (119,9 X 16.8)Մ ԱՐՏԱՔԻՆ ՉԱՓԵՐՈՎ ԵՐԿՈՒ ՃՏԱՆՈՑԻ, ԷԼԵԿՏՐՈՎԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՅԱՆԻ՝ 250 ԿՎՏ ՀՈՂՈՒԹՅԱՄ Ա. 254,29 Մ ԵՐԿԱՐՈՒԹՅԱՄ ՊԱՐԻՍՊԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ
ՆԱԾ	Ս. ԷՐԱՐՅԱՆ		ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՍ		ՓՈՒԼ	ԹԵՐԹ	ԹԵՐԹԵՐ
ՆԱԽԱՍԵՏ	Ս. ՄԱՐԳԱՐՅԱՆ				ՃԼ	3	102
ՍՏՈՒԳԵՑ	Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ		ՇԻՆՋՐԱՊԱՐԱԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ		« ՄԱՐԳԱՐՅԱՆ ԲԻՆԴԻՆԳ ԳՐՈՒՊ » ՍՊԸ		

ՇԻՆՋՐԱՊԱՐԱԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ



- ՇԱՆՈՒՈՒԹՅՈՒՆ**
- ՇՆ. ԱՇԽԱՏԱԲԵՐԸ ՍԿԱԵԼ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՇՆ. ԹՈՒՅԼ-ՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒՅ ԳԵՏՈՒ
 - ՀԱՎԱԳՐԵԶԱԿԻ ԱՆՎՏԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍՏԱՆՍ-ՎՈՒԹՅՈՒՆԸ ԿՐՈՒՄ Է ՇՆ-ՈՒԹՅԱՆ ԴԵՎՎԱՐԸ ԿԱՄ ՆՐԱՆ ՓՈԽՈՒՄՈՒՆ ԱՆԶԸ
 - ՇՆ. ԳՐԱՊԱՐԱԿԻ ՊԵՏԵՐ Է ԿՐՈՒՄԵԿՏԱՌՈՒԵԼ ԿՐԱՎԱՐԻՉԵՐՈՎ

- ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԼԵԳԱՆԵՐ**
- ԿԱՏՈՒՄԱՐՈՒՄԻ ԿՈՆՏՐՈՒԼ ՊԱՐԵՍՆԵՐ
 - ԲԵՏՈՆԵ ԸՆԴՈՒՆԱՆ ԱՌՈՒԿԵՐ ԵՐ ԿՐԱՏՐՈՒԹՅԱՆ ՊԱՐԵՍ ԱՎԱԾԻ ԿՈՒՊՈՆԵՆՏ
 - ԷԼ. ՎԱՐԱՆԱԿ ԼՈՒՄԱՐԱԿ
 - ԱՐԵՎԻԿ ՍԵՆՅԱԿ

ԺԱՐՆԱԿԱՐ ՇՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

N	Անվանումը	Քանակը	Չափը	Տեսակը	Մակերեսը
4	Աշխարհի տնակ	1	6x3x2.5	շարժական	18.0
5	Վարդերգարան	1	10x3.2x2.5	հավաքովի	32.0
6	Մենոյի լրացումն անոթակ	1	10x3.2x2.5	հավաքովի	32.0
7	Նյութատեխնիկական պահեստ	1	6x3x2.5	շարժական	18.0
8	Տնի. հսկիչի տնակ	1	6x3x2.5	շարժական	18.0

				Գ. ԼՈՒՈՒ ՄԱՐԶ, Զ. ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔ, ՔԱՐԱՋՈՐ ԲՆԱԿԱԿԱՅՐ (6.5 X 8)Մ ԱՐՏԱԹԻՆ ԶԱՓԵՐՈՎ ՍԵՊՏԻԿ ՀՈՐԻ, (121,9 X 16.85)Մ ԱՐՏԱԹԻՆ ԶԱՓԵՐՈՎ ԵՐԿՈՒ ՀԱՎԱՆՈՑԻ Ա 347,7 Մ ԵՐԿԱՌՈՒԹՅԱՆ ՊԱՐԻՍՊԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ		
				ՃԱՐՏԱՐԱԴԵՏԱԿԱՆ ՄԱՍ		
ՆԱԾ	Ս. ԷՐԱՐՅԱՆ			ՓՈՒԼ	ԹԵՐԹ	ԹԵՐԹԵՐ
ՆԱԽԱԳԵՏ	Ս. ՄԱՐԳԱՐՅԱՆ			ՃԼ	3	102
ԱՏՈՒԳԵՏ	Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ			« ՄԱՐԳԱՐՅԱՆ ԲԻՆԴԻՆԳ ԳՐՈՒՊ » ՍՊԸ		
				ՇԻՆՋՐԱՊԱՐԱԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ		

2.2 Նախապատրաստական փուլ

Նախապատրաստական փուլում իրականացվում են՝

- ժամանակավոր ցանկապատում,
- ժամանակավոր ինժեներական ցանցերի տեղադրում,
- պահեստային և մոնտաժային հարթակների կարգավորում,
- ժամանակավոր շինությունների տեղադրում,
- մեքենաների և մեխանիզմների փոխադրում շինհրապարակ,
- բանվորների հրահանգավորում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ,
- անվտանգության նշանների տեղադրում,
- հակահրդեհային միջոցների տեղադրում:

Շինարարությունը նպատակահարմար է իրականացնել I,II,III հոսքերով, որոնց նկարագիրը և աշխատանքների ծավալները բերված են Աշխատանքների կատարման ժամանակացույցում:

2.3 Շինարարության ժամկետները

Շինարարության տևողությունը որոշվել է ըստ շինմոնտաժային աշխատանքների նորմատիվ աշխատատարության հաշվարկման և դրանց արդյունավետ համատեղման:

Շինարարության տևողությունը կազմում է **24** օրացուցային ամիս, կամ **720** օրացուցային օր:

Բանվորների առավելագույն քանակը **48** մարդ:

2.4 Հիմնական շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկը

Հիմնական շինարարական տեխնիկայի պահանջարկը որոշվում է աշխատանքների ծավալների, մեխանիզմների և մեքենաների միջին արտադրողականության և աշխատանքների կատարման ընտրված եղանակների հիման վրա: Հիմնական մեքենաների և մեխանիզմների անվանացանկը բերված է աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1 Շինարարական մեքենաների և մեխանիզմների անվանացանկ

NN	Անվանում	Մակնիշ	Քանակ
1	Ավտոկրունկ	КС 55713-6 ГАЛИЧАНИН	2
2	Էքսկավատոր կախովի սարքավորումներով	JCB JS130LC	1
3	Ավտոբետոնապոմպ	SCHWING S36 SX	2
8	Եռակցման տրանսֆորմատոր	ТД-500	2
10	Փոքր մեքենայացման միջոցներ	կոմպլեկտ	4
11	Ավտոինքնաթափ		ըստ հաշվարկի
12	Ավտոբետոնախառնիչ	СВ69Б	ըստ հաշվարկի

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը իրականացվելու է շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում:

Շինարարական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ բետոնի խառնուրդը կմատակարարվի բետոնատար ավտոմեքենաներով, մասնագիտացված ընկերության կողմից, պայմանագրային հիմունքներով:

2.5 Հիմնական շինարարական աշխատանքների և ռեսուրսների ծավալները

Աղյուսակ 3

Հիմնական շինարարական աշխատանքների ծավալներ

NN	Աշխատանքների անվանումները	Չափման միավ.	Ծավալը
1	Փոսորակի մշակում	մ ³	3100.0
2	Հետլիցք	մ ³	1050,0
3	Ե/բ հիմքեր	մ ³	330,0
4	Ե/բ սյուներ	մ ³	98,0
5	Ե/բ պարզունակներ	մ ³	123,0
6	Ե/բ ծածկ	մ ³	492,0
7	Ե/բ պատեր	մ ³	120,0
8	Պատերի շարվածք	մ ³	1200,0
9	Ամրանավորում և ներդիր դետալներ	տ	165,0

Ավելացած հողային զանգվածը կօգտագործվի տեղանքի հարթեցման համար:

2.5.1 Նյութերի և բնառեսուրսների օգտագործում

Արտադրական օբյեկտի կառուցման շինարարության ժամանակ օգտագործվում են տարբեր շինարարական նյութեր, այդ թվում երկաթբետոն, սրբատաշ և կոպտատաշ քար, փայտ, մետաղ, ապակի, բարձրորակ սվաղ, երեսապատման բարձրորակ նյութեր, ավագ, ցեմենտ, ներկանյութեր, բետոնյա կոնստուկցիաներ, մետաղական կոնստուկցիաներ և այլն:

Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման համար՝ և շինանձնակազմի խմելու կենցաղային նպատակների համար:

ա) Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$W_{\Sigma. \text{a}} = (n \times N + n_1 \times N_1) \times T, \text{ որտեղ}$$

n – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 3 մարդ

N– ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ³օր/մարդ

n₁– սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 48 մարդ

N₁ – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 մ³օր/մարդ

T – աշխատանքային օրերի թիվն է՝ 720 օր

$$W_{\Sigma. \text{a}} = (3 \times 0.016 + 48 \times 0.025) \times 720 = 898.56 \text{ մ}^3/\text{շին. ժամ. կամ } 1.248 \text{ մ}^3/\text{օր:}$$

բ) Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝

$$U_1 = S_1 \times K_1 \times T, \text{ որտեղ՝}$$

S₁ – ջրվող տարածքի մակերեսը, 500 մ²,

$K_1 - 1 \text{ մ}^2$ օրական ջրցանի նորմը, 0.0015 մ^3 ,

$T -$ ջրցանի ժամանակահատվածը օրերով, 300

$U_1 = 500 \times 0.0015 \times 300 = 225 \text{ մ}^3/2\text{ին. ժամ. կամ } 0.75 \text{ մ}^3/\text{օր}$

Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 1123.54 մ³/2ին. ժամ:

Բանվորկան և ԻՏԱ անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու համար շինհրապարակում կտեղադրվեն ժամանակավոր բիոզուգարաններ, որոնք շինաշխատանքների ավարտից հետո կապամոնտաժվեն:

Շինհրապարակում սանիտարական կանոնները և նորմերը պահպանվելուն են համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N15-Ն հրամանի համաձայն:

Ջրցանի, բանվորկան և ԻՏԱ անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու համար Ջրամատակարարումը կիրականացվի ավտոցիստերնով, «ՍՊԻՏԱԿԻ ԹՌՉՆԱԲՈՒԾԱԿԱՆ ԿՈՄԲԻՆԱՏ» ՍՊԸ մայր գործարանից, Վեոլիա Ջուր ՓԲԸ-ի հետ պայմանագիրը կցված է ՆԳՀ հավելվածների բաժնում:

2.6 Թափոնների կառավարում

Շինաշխատանքների իրականացման ընթացքում առաջացող թափոնների տեսակները և քանակները՝

	Անվանումը	Վտանգավորության դասը	Ծածկագիրը ըստ «Թափոնների ցանկի»	Քանակը
1.	Շինարարական աղբ	IV	9120060001004	100 մ ³
2.	Փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող	V	31401100 08 09 5	2050 մ ³
3.	տարածքում առաջացած կենցաղային չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի)	IV	9120040001 00 4	0.8 տ

Ավելացած հողային զանգվածը կօգտագործվի տեղանքի հարթեցման համար:

Շինարարական աղբը ամբողջությամ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

Արտադրական օբյեկտի շահագործման փուլում առաջացող հավի ծեռոտի թափոնները պետք է վնասազերցվեն համապատասխան լիցենզիա ունեցող կազմակերպությունների կողմից բիոգազ ստանալով, կամ օգտագործվեն որպես պարատանյութ գյուղատնտեսական հողերի որակը բարելավելու նպատակով:

Հավերի և ճտերի անկումից առաջոցող թափոնները ևս կհանձնվեն համապատասխան լիցենզիա ունեցող կազմակերպությունների, վնասազերցման համար :

Ընկերությունը օրենքով սահմանված կարգով կդիմի ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն թվյալ թափոնները անձնագրավորելու նպատակով :

3 ՆԱԽԱՏԵՄՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԽԵՄԱՆ

3.1 Ընդհանուր տեղեկություններ ուսումնասիրված տեղամասերի վերաբերյալ

Տարածքը գտնվում է Վանաձոր-Սպիտակ ավտոմայրուղու աջ կողմում (Շիրակի խճ. 155), Սպիտակ քաղաքի ծայր հյուսիս - արևելյան մասում:

Գեոմորֆալոգիական տեսակետից տարածքը գտնվում է Բազումի լեռնաշղթայի ծայր հարավային լանջերին: Այն ոչ մեծ թեքությամբ ընկնում է հարավ:

Տարածքի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են հրաբխածին և նստվածքային ապարները՝ անդեզիտներ, պորֆիրիտներ, աուֆեր ու աուֆարեկչիտներ, դրանք ծածկված են զգալի հզորությամբ, վերին չորրորդական դելյուվիալ և էոլովիալ գոյացումներով:

Շինարարության աարածքի հյուսիսային հատվածը հարթեցված է երկու հարթակների տեսքով ավելի քան 40 տարի առաջ:

Տեղամասի բացարձակ բարձրությունը գտնվում է 1590մ. սահմաններում:

**ՏԵՂԱՄԱՍԻ ԵՐԿՐԱԲԱՆՍ - ԼԻԹՈԼՈԳԻԱԿԱՆ
կառուցվածքը**

Անցած փորվածքների տվյալներով և ֆոնդային նյութերով հաստատված է, որ տեղամասի երկրաբանա - լիթոլոգիական կառուցվածքը պարզ է, երկրաբանական բարդությամբ վերաբերվում է առաջին կարգի, կազմված է վերին չորրորդական գոյացումներից և ներկայացված է հետևյալ ինժ.-երկրաբանական տարրերով (ԻԵՏ) վերնիցներքև:

- ԻԵՏ-1 բուսական շերտ մանրախճի պարունակությամբ:
 - Շերտի հզորությունը փոփոխական, մինչև 0,7մ,
 - տարածված է ամբողջ տեղամասում
 - Ըստ մշակման IIIկ.՝ 3.1-1, π 24ը (ՇՊՊ –IV-2-82)

ԻԵՏ-2 լցնովի գրունտներ - ենթակավեր ու ենթավազներ, պինդ, փխրուն, խոշորածակոտկեն

4 Շերտի հզորությունը մինչև 3,5մ.,
տարածված է ամբողջ տեղամասում,
դեյուվիալ գոյացումներ:
Ըստ մշակման III կ. տ.1-1, և 32 (ՇԽՊ –IV-2–82)

ԻԵՏ-3 ենթավազներ, բաց դեղնա - շագանակագույն, պինդ, խոշորածակոտկեն,
ավազային ու մանրախճային շերտերի պարունակությամբ, լյուսանման,
Շերտի բացված հզորությունը 7,0մ. և ավելի
տարածված է ամբողջ տեղամասում,
դեյուվիալ- էոլովիալ գոյացումներ:
Ըստ մշակման III կ. տ.1-1, և 33 (ՇԽՊ –IV-2–82)

ԻԵՏ—4 խոշորաբեկոր - ճալաքարային գրունաներ ավազային կամ ենթավազային
լցանյութով:

Այլուվիալ-դեյուվիալ գոյացումներ:
Ըստ մշակման IV/ IV կ. տ.1-1, և 6Գ (ՇԽՊ –IV-2–82)

1. Տեղամասը հետազոտված խորության վրա ներկայացված է չորս հիմնական ինժինեռա-երկրաբանական տարրերով, պահպանվող հզորությամբ և ըստ ռելեֆի տարածումով:
2. Շինարարության և կառուցվածքների շահագործման վրա ազդող երկրաբանական պրոցեսներ (սողանք, կարստ, փլուզում և այլն) չկան:
3. Շինարարության տարածքի հյուսիսային հատվածը հարթեցված է երկու հարթակների տեսքով ավելի քան 40 տարի առաջ:
4. Համաձայն ՀՀՇՆ 20. 04-20-ի Սպիտակ քաղաքը գտնվում է երրորդ սեյսմիկ գոտում, գրունտների հնարավոր մաքսիմալ $I_{\text{ուու}} = 0,5g$ արագացումով: Սեյսմիկ հասկություններով գրունտները ընդհանուր առմամբ երրորդ կարգի են:
5. Որպես հիմնատակ ծառայելու են ԻԵՏ 3 և ԻԵՏ 4-ի գրունտները՝ $R_o = 0,16$ Մպա ($1,6կգ.ու/սմ^2$) և $0,35$ Մպա ($3,5կգ.ու/սմ^2$) հաշվարկային դիմադրությամբ համապատասխանաբար;
6. ԻԵՏ 3-ի լյուսանման գրունտները լրացուցիչ խոնավացման դեպքում կարող են կորցնել ամրությունը և տեղիք տալ մեծ անհավասարաչափ նստվածքների:
7. Գրունտների սեզոնային սառեցման ամենամեծ խորությունը 103սմ է:
8. Տեղամասը պիտանի է կապիտալ շինարարության համար առանց ինժեներական նախապատրաստման:

3.2 Ջրային ռեսուրսներ

Ջրագրական տեսանկյունից առավել նշանակալի է Փամբ գետը, որը միանալով Փամբիջուր գետին թափվում է Փամբակ գետը:

Փամբակ գետը սկիզբ է առնում Ջաջուռի լեռնանցքի արևելյան լանջից, նրան միանալով՝ Չիչկան գետը ձգվում է 86 կմ, իսկ ջրհավաք ավազանը կազմում է 1370 կմ²:

Փամբակը վերին հոսանքում հոսում է նեղ, աստիճանաբար լայնացող հովտով, այնուհետև միջին և ստորին հոսանքներում այն արագահոս է և ունի մեծ անկում:

Տարածքի շրջակայքում առկա են փոքր ու միջին մեծության գետակներ և առուներ, որանց գերակշռող մասը ունեն սեզոնային հոսք:

3.3 Հողեր

Ուսումնասիրվող տարածքում հողային կազմը հիմնականում արտահայտված է լեռնատափաստանային խճաքարաշագանակավուն սևահողերով: Այստեղ հողի քարքարոտվածությունը 0-70 սմ խորություններում բարձր է և հասնում է 10% - 30%-ի: 0 – 20 սմ խորությունում հումուսի պարունակությունը տատանվում է 4-6%:

Ըստ հողի մեխանիկական կազմի հումուսակումուլյացիոն հորիզոնում մասնիկների պարունակությունը, որոնք 0,01 մմ-ից փոքր են, կազմում են 20 – 45%:

Ուսումնասիրվող տարածքի ընդհանուր էրոզացվածությունը միջին է՝ մինչև 25%, առանձին տեղամասերում մեծանալով հասնում է 45% տարածքի մոտ 30 % չէրոզացված է, թույլ էրոզացված է 21%-ը, միջին էրոզացված 35%-ը և շատ էրոզացված 14%-ը:

3.4 Կենսաբազմազանություն. Բուսականություն

Տարածքը ներկայացված է մարգագետնա-տափաստանային բուսականությամբ, որում գերակշռում են Փետրախոտ նեղատերև (*Stipa tirsia*) և Շյուղախոտ Ռուպրեխտի (*Festuca ruprechtii*) տեսակները (Նկ. 1), որոշ տեղերում ներկայացված են Գազ մանրագլխիկ (*Astragalus microcephalus*) տեսակի գերակշռությամբ տրագականտներ (Նկ. 2): Հողամասը տեղական բնակչության կողմից օգտագործվում է որպես արոտավայր, արոտավայրերի բեռը միջին է, նշվում են առանձին էրոզացված տարածքներ:



Նկար 1.



Նկար 2. Գազ մանրագլխիկ տեսակի գերակշռությամբ տրագականներ
Բուսականության կազմում գրանցվել են հետևյալ տեսակները

<i>Stipa tirsia</i>
<i>Festuca ruprechtii</i>
<i>Astragalus microcephalus</i>
<i>Psephellus dealbatus</i>
<i>Centaurea rhizantha</i>
<i>Onobrychis biebersteinii</i>
<i>Minuartia oreina</i>
<i>Convolvulus lineatus</i>
<i>Lotus caucasica</i>
<i>Bromus japonicus</i>
<i>Thymus kotschyanus</i>
<i>Draba siliquosa</i>
<i>Cerastium glomeratum</i>
<i>Artemisia splendens</i>
<i>Cerinthe minor</i>
<i>Stachys recta</i>
<i>Teucrium polium</i>
<i>Leontodon hispidus</i>
<i>Scutellaria orientalis</i>

<i>Rosa corymbifera</i>
<i>Iris pumila</i>
<i>Campanula stevenii</i>
<i>Plantago lanceolata</i>
<i>Marrubium parviflorum</i>
<i>Salvia nemorosa</i>
<i>Hieracium murorum</i>
<i>Potentilla recta</i>
<i>Verbascum varians</i>
<i>Poa compressa</i>
<i>Eryngium billardieri</i>
<i>Achillea setacea</i>
<i>Alyssum tortuosum</i>
<i>Astragalus szovitsii</i>
<i>Cotoneaster integerrima</i>
<i>Phlomis tuberosa</i>
<i>Trifolium hybridum</i>
<i>Filipendula ulmaria</i>
<i>Hypericum perforatum</i>
<i>Myosotis sparsiflora</i>
<i>Coronilla varia</i>
<i>Dactylis glomerata</i>
<i>Anthyllis boissieri</i>
<i>Crataegus caucasica</i>

...

<i>Vicia variegata</i>
<i>Crambe orientalis</i>
<i>Echium vulgare</i>
<i>Spiraea crenata</i>
<i>Reseda lutea</i>
<i>Sideritis montana</i>

Հայաստանի Կարմիր գրքում ընդգրկված բուսատեսակներ չեն գրանցվել:

ԿԵՆԴԱՆԻՆԵՐ

Կառուցապատող ենթակա տարածքին հարող տեղամասերում հայտնաբերվել են երկկենցաղների՝ 2, սողունների՝ 3, թռչունների՝ 18 և կատնասունների 2 տեսակ: Ողնաշարավորների ֆաունայի տեսակները հիմնականում պատկանում են լեռնատափաստանային և մարգագետնային տարրերին, երկկենցաղները զարգացման ցիկլերի այս կամ այն փուլերում կապված են գերիտնավ բիոտոպերի հետ:

Երկկենցաղներ (Amphibia) – Տարածքում գրանցվել է կանաչ դոդոշը (*Bufo variabilis* Pall.) անդրկովկասյան գորտը (*Rana macrocnemis* Boul.)

Սողուններ (Reptlia) Գրանցվել են միջին մողեսը (*Lacerta media* Lantz&Cyr.) և պղնձոցը (*Coronella austriaca* Laur.): Բացի այդ, տարածքում հայտնաբերվել է ՀՀ Կարմիր գրքում գրանցված («Խոցելի – ՎՍ» կարգավիճակով) հայկական լեռնատափաստանայի իժի (*Vipera eriwanensis* Reuss.) մեկ առանձնյակ:

Թռչուններ (*Aves*) Տարածքում և նրան անմիջապես հարող տեղամասերում դիտարկվել են հետևյալ թռչնատեսակներ. դաշտային (*Alauda arvensis* L.) և անտառային (*Lullula arborea* L.) արտույտները, անտառային ձիաթռչնակը (*Anthus trivialis* L.), սովորական քարաթռչնակը (*Oenanthe oenanthe* L.), մարգագետնային չքքանը (*Saxicola rubetra* L.), այգու դրախտապանը (*Emberiza hortulana* L.), ժուլանը (*Lanius collurio* L.), մոխրագույն շահրիկը (*Sylvia communis* Latham), կանեփնուկը (*Linaria cannabina* L.), սովորական կկուն (*Cuculus canorus* L.) և լորը (*Coturnix coturnix* L.), ինչպես նաև սինաթրոպ տեսակներ՝ գյուղական (*Hirundo rustica* L.), տնային ճնճղուկը (*Passer domesticus* L.), գորշ ագռավը (*Corvus corone* L.) և կաչաղակը (*Pica pica* L.): Տեղամասեր 2 և 3-ի միջև գտնվող տարածքում կա առափնյա ծիծեռնակների (*Riparia riparia* L.) գահուրթ, թռչունները որս են կատարում նաև վերոհիշյալ տեղամասերում: Գրանցվել են նաև գիշատիչ թռչուններ՝ սովորական հողմահար բազեն (*Falco tinnunculus* L.) և տափաստանային ճուռակը (*Buteo rufinus* Cretzschmar.), որոնք օգտագործում են տարածքը որպես կերհանդակ:

Կաթնասուններ (*Mammalia*) – տարածքում հայտնաբերվել են սովորական դաշտամկան (*Microtus arvalis* Pall.) եզակի բներ:

3.5 Կլիմայական պայմաններ

Հայաստանի հանրապետության տարածքում առկա է բնակլիմայական պայմանների մեծ բազմազանություն, որի ձևավորման գործում մեծ ազդեցություն ունի երկրի աշխարհագրական դիրքը, ծովի մակարդակից ունեցած բարձրությունը, տեղանքի բարդ և մասնատված ռելիեֆը, մի շարք այլ առանձնահատկություններ: Տարածքի կլիմայի վրա շոշափելի ազդեցություն է թողնում Հայաստանի Հանրապետության՝ մերձարևադարձային գոտու հյուսիսային լայնությունների վրա գտնվելը, որը բնութագրվում է չոր կոնտինենտալ կլիմայով ու կլիմայական հակադրություններով, ասյտեղ գերակշռող դեր է ունենում Մեծ Կովկասի, Իրանական և Փոքրասիական բարձրավանդակների, արաբական անապատների, Սև և Կասպից ծովերի ազդեցությունը:

Հանրապետության տարածքում տարվա ընթացքում գերակշռում են մերձարևադարձային գոտուն բնորոշ օդային հոսանքները, որոնք, հանդիպելով տեղանքի լեռնային ռելիեֆին, առաջացնում են քամիների բազմազանություն: Բացարձակ բարձրությունների նիշերի աճմանը զուգահեռ մեծանում է նաև քամիների արագությունը:

Այն ամռան ընթացքում բարձրադիր լեռնային շրջաններում կարող է երբեմն տատանվել 6-9 մ/վ արագության սահմաններում իսկ խորը կիրճերում այն կարող է նվազել՝ հասնելով մինչև 1մ/վ արագության:


Նախատեսվող կառուցապատման տարածքը շրջապատված է մի շարք օդերևութաբանական կայաններով և դիտակետերով, որոնց մեծ մասը արդեն փակված են,

սակայն այդ կայաններից ստացված բազմամյա տվյալների միջոցով հնարավոր է դառնում պատկերացում կազմել տվյալ տեղանքի կլիմայական բնութագրիչների վերաբերյալ:

Դրանցից են Շիրակամուտ դիտակետը, որը գտնվում է 1643 մ բարձրության վրա, Վանաձոր քաղաքային կայանը՝ 1353 մ, Սպիտակ կայանը՝ 1528 մ և Ջաջուռ երկաթգծային կայանը 1796 մ: Վանաձոր հիդրոոդերևութաբանական կայանը աշխատում է մինչ օրս և գտնվում է 1376 մ բարձրությունների վրա:

Նախատեսվող կառուցապատման տարածքի կլիման ըստ ՀՀ կլիմայական շրջայնացման ցուրտ-ցամաքային է: Այստեղ առկա կայանների և դիտակետերի տվյալների համաձայն՝ օդի տարեկան միջին ջերմաստիճանը տատանվում է -11 - ից 24 °C սահմաններում, մթնոլորտային տեղումները՝ 450 – 550 մմ սահմաններում:

Լեռնագագաթներին և բարձրադիր այլ ջրբաժաններում ձնածածկույթը պահպանվում է մինչև մայիս – հունիս ամիսը, իսկ ցածրադիր շրջաններում՝ 1-2 ամսից մինչ 4, երբեմն 5 ամիս է:



Քարտեզ 11: Ուսումնասիրության մեջ օգտագործված հիդրոոդերևութաբանական կայանների և դիտակետերի Բաշխվածությունը

Ստորև բերված աղյուսակներում ներկայացվում են տարածաշրջանի կլիմայական ցուցանիշները. միջին ամսական և տարեկան օդի հարաբերական խոնավությունը, օդի հարաբերական խոնավությունը օրվա տարբեր ժամերին, տեղումների միջին ամսական և տարեկան քանակը, օդի ջերմաստիճանը օրվա տարբեր ժամերին, օդի միջին նվազագույն ջերմաստիճանը, օդի միջին առավելագույն ջերմաստիճանը, հողի մակերևույթի միջին ամսական և տարեկան ջերմաստիճանը, հողի մակերևույթի բազմամյա միջին ջերմաստիճանը ըստ առկա հիդրոոդերևութաբանական կայանների և դիտակետերի:

Աղյուսակ 4: Միջին ամսական և տարեկան օդի հարաբերական խոնավությունը (%)

կայաններ և դիտակետեր	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	տարի
Սպիտակ	71	72	72	68	72	73	71	70	70	71	73	72	71
Վանաձոր ՅՕԿ	70	71	72	69	74	75	75	74	73	73	73	71	73

Աղյուսակ 5: Օդի հարաբերական խոնավությունը (%) օրվա տարբեր ժամերին

դիտաժամ	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	տարի
Սպիտակ													
0	75	76	79	78	82	84	81	77	81	82	79	76	79
3	76	78	81	81	86	88	85	84	85	85	81	78	82
6	77	79	82	84	87	89	87	87	88	86	82	79	84
9	73	74	73	68	68	68	66	68	70	73	75	74	71
12	64	64	62	55	55	55	55	54	50	53	60	64	58
15	62	61	59	52	54	55	54	52	47	50	58	62	56
18	69	69	65	59	63	64	62	62	61	64	69	70	65
21	72	73	74	71	76	77	74	73	75	77	76	74	74
Վանաձոր ՅՕԿ													
0	76	77	82	82	86	88	86	84	86	86	82	77	83
3	77	80	84	85	90	91	89	88	89	89	84	79	85
6	79	80	85	87	91	92	90	90	91	90	85	79	87
9	74	74	73	67	69	70	70	71	72	75	76	74	72
12	59	60	58	51	55	57	59	58	51	51	55	58	56
15	56	58	55	50	56	58	59	57	50	48	54	56	55
18	65	66	64	59	64	66	65	64	64	66	67	67	65
21	73	74	76	74	80	80	78	77	79	82	79	75	77

Աղյուսակ 6: Տեղումների միջին ամսական և տարեկան քանակը

դիտաժամ	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	տարի
Շիրակամուտ	18	26	34	60	93	82	49	42	32	38	31	23	528
Սպիտակ	15	18	25	48	77	77	45	35	31	41	27	16	455
Վանաձոր ՅՕԿ	17	25	36	62	95	92	56	41	34	45	35	19	557
Վանաձոր ք.	23	24	44	64	106	112	78	59	45	52	35	18	660

Աղյուսակ 7: Օդի ջերմաստիճանը (°C) օրվա տարբեր ժամերին

դիտածամ	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
Ջաջուռ												
0	-8.2	-7.4	-2.8	3.6	7.9	11	14.7	14.4	11.2	6	0.3	-5.4
3	-8.5	-7.8	-3.5	2.8	7	10.1	13.7	13.5	10.2	5	-0.2	-6
6	-9	-8.1	-3.9	2.2	6.8	10.2	13.5	12.9	9.4	4.1	-0.5	-6
9	-8	-6.6	-1.8	5.4	10.4	14	17.5	16.1	13.5	7.5	2	-5
12	-5	-4.1	0.5	8.1	13	16.9	21	21.2	18	11	4	-3
15	-4.7	-3.6	1.3	8.9	13.4	17.4	23	22	19	12	5	-2.3
18	-7.1	-5.8	-0.2	7.4	12.3	15.5	19.3	18.8	15.3	8.6	1.9	-4.5
21	-8	-6.8	-2	4.7	9	12.3	15.9	15.5	12.4	7	1	-5.3
Սպիտակ												
0	-5.6	-5.2	-1.4	4.5	8.4	11.2	15.2	14.9	11.4	5.8	1.5	-3
3	-6	-5.8	-2.2	3.5	7.2	9.9	13.8	13.5	9.9	4.8	0.9	-3.6
6	-6.2	-6.2	-2.7	2.8	6.8	9.6	13.2	12.5	8.8	3.9	0.5	-3.8
9	-5.1	-4.6	-0.2	6.9	11.7	15.2	18.5	17.5	13.6	7.9	2.6	-2.7
12	-1.9	-1.4	3	10.3	14.7	18.4	21.8	21.4	18.7	12.7	6.4	0.5
15	-1.3	-0.5	3.9	10.9	15.1	18.8	22.5	22.2	19.7	13.7	6.9	0.9
18	-9.5	-2.6	2.3	9.3	13.2	16.5	20.2	19.5	16.8	10.2	4.1	-1.4
21	-4.8	-4.2	-0.1	6.3	10.2	13	16.9	16.6	13.4	7.5	2.6	-2.4
Վանաձոր ԶՕԿ												
0	-4.6	-4	-0.2	5.4	8.9	12	15.7	15.2	12.1	6.1	1.9	-2.1
3	-5.3	-4.9	-1.2	4.1	7.4	10.3	14.2	13.9	10.2	4.8	1.2	-2.8
6	-5.6	-5.4	-1.8	3.3	7	10	13.7	12.9	9	4.1	0.7	-3.1
9	-4.2	-3.5	1.5	8.4	12.7	16.2	19	17.9	14.1	8.3	3.1	-1.6
12	0.2	0.8	5.1	12.2	16.2	19.6	22.1	21.6	19.6	14.2	8.1	2.6
15	0.8	1.6	6.1	12.7	16.3	19.8	22.7	22.3	20.5	15	8.6	3
18	-1.8	-0.9	4	10.8	14.4	17.9	21.2	20.3	17	11	5.3	0
21	-3.6	-2.9	1.2	7.3	11	14.3	17.9	17.3	13.9	7.8	3.1	-1.4

Աղյուսակ 8: Օդի միջին նվազագույն ջերմաստիճանը

դիտածամ	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	տարի
Ջաջուռ Ե.գ.	-11.7	-10.3	-5.8	0.6	5.5	8.6	12.2	12.4	8.5	3.1	-2	-8.1	1.1
Ջաջուռ Ե.գ.	-11.2	-10.3	-6.3	-0.2	4.7	7.8	10.7	10.7	7.4	3.1	-1.8	-7.6	0.6
Վանաձոր	-8.2	-7	-3.6	1.9	6.3	9.1	12.6	12.1	8.6	3.1	-0.9	-5.5	2.4

Աղյուսակ 9: Օդի միջին առավելագույն ջերմաստիճանը

դիտաժամ	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	տարի
Ջաջուռ ե.գ.	-8	-6	-1	8	13	19	24	23	18	9	1	-5	8
Սպիտակ	-5	-4	2	9	14	18	22	21	17	10	3	-2	9
Վանաձոր ՅՕԿ	-4	-3	3	11	16	20	23	22	19	11	4	-2	10

Աղյուսակ 10: Հողի մակերևույթի միջին ամսական և տարեկան ջերմաստիճանը (°C)

դիտաժամ	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	տարի
Ջաջուռ ե.գ.	-8	-6	-1	8	13	19	24	23	18	9	1	-5	8
Սպիտակ	-5	-4	2	9	14	18	22	21	17	10	3	-2	9
Վանաձոր ՅՕԿ	-4	-3	3	11	16	20	23	22	19	11	4	-2	10

Աղյուսակ 11: Հողի մակերևույթին բազմամյա միջին ջերմաստիճանը՝ ըստ դիտաժամերի

դիտաժամ	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
Սպիտակ												
0:00	-8	-7	-3	2	7	10	14	13	10	4	-1	-6
3:00	-8	-8	-4	1	5	8	12	12	8	3	-2	-6
6:00	-9	-8	-4	1	6	10	13	11	7	2	-2	-6
9:00	-6	-4	2	13	20	25	27	26	20	12	4	-3
12:00	2	3	10	22	27	34	37	36	33	23	13	5
15:00	1	3	10	19	24	30	36	35	30	21	10	3
18:00	-6	-4	2	10	15	20	24	23	17	9	2	-3
21:00	-7	-6	-2	4	9	12	16	16	12	5	0	-5
Վանաձոր ՅՕԿ												
0:00	-7	-7	-2	4	8	12	15	15	11	5	-1	-5
3:00	-8	-7	-3	2	7	10	14	13	9	4	-1	-6
6:00	-8	-8	-4	2	6	10	14	12	8	3	-2	-6
9:00	-5	-3	4	16	22	26	29	26	22	13	4	-2
12:00	5	6	15	25	30	35	37	37	36	25	14	7
15:00	3	6	14	22	27	32	35	35	33	22	11	4
18:00	-5	-3	4	12	17	23	27	24	18	10	3	-3
21:00	-6	-5	-1	6	10	14	18	17	13	7	1	-4

3.6 Օդային ավազան

3.6.1 Ֆոնային աղտոտվածություն

Օդային ավազանի աղտոտվածության մոնիտորինգային աշխատանքները կատարվում են ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն» (ՇՄՏՄԿ) ՊՈԱԿ-ի կողմից: Հաշվի առնելով այն, որ Սպիտակ համայնքում մթնոլորտային օդի աղտոտվածության դիտարկումները բացակայում են, սույն հայտում բերվում են օդային ավազանի ֆոնային կոնցենտրացիաների հաշվարկային արժեքները:

ՀՀ բնակավայրերի (բացառությամբ Երևան, Վանաձոր, Արարատ, Հրազդան և Գյումրի քաղաքների) մթնոլորտային օդի աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաների արժեքները ներկայացված են Աղյուսակ 3-ում, որոնց հաշվարկները կատարվել են ըստ տվյալ բնակավայրի ազգաբնակչության թվաքանակի:

ՀՀ բնակավայրերի ազգաբնակչության թվաքանակը ընդունված է համարել ՀՀ-ի ազգային վիճակագրական ծառայության (ԱՎՕ) 2011 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ վիճակագրական տեղեկագրում բերված տվյալները: Համաձայն ՀՀ ԱՎՕ վիճակագրական տեղեկագրի՝ Սպտակ համայնքում բնակչության թվաքանակը կազմել է 13000 մարդ և Քարաձոր բնակավայր 331 մարդ:

Ելնելով նշված թվաքանակից և ֆոնային կոնցենտրացիաների հաշվարկային արժեքներից (Աղ.3), Սպիտակ համայնքում աղտոտիչների ֆոնային կոնցենտրացիաների արժեքները գնահատվում են հետևյալ տիրույթում. փոշու մասնիկներ՝ 0,3մգ/մ³, ածխածնի մոնօքսիդ՝ 0,8 մգ/մ³, ազոտի երկօքսիդ՝ 0,015 մգ/մ³ և ծծմբի երկօքսիդ՝ 0,05 մգ/մ³ իսկ Քարաձոր համայնքում՝ փոշու մասնիկներ՝ 0,2մգ/մ³, ածխածնի մոնօքսիդ՝ 0,4 մգ/մ³, ազոտի երկօքսիդ՝ 0,008մգ/մ³ և ծծմբի երկօքսիդ՝ 0,02 մգ/մ³ :

Նշված մակարդակները գտնվում են ՀՀ գործող նորմերի (ՀՀ որոշում 160-Ն, 2006 թ.) սահմանում, բացառություն է կազմում ընդհանուր փոշու մասնիկները, որոնց ֆոնային կոնցենտրացիան մոտ 1.5 անգամ գերազանցում է գործող ՄԹԿ-ն (ՄԹԿ_{փոշի} = 0,15 մգ/մ³):

Աղ. 3 *Մթնոլորտի աղտոտող որոշ նյութերի ֆոնային կոնցենտրացիաները՝ հաշվարկված ըստ բնակավայրերի ազգաբնակչության թվաքանակի (2011թ.-ի մարդահամար):*

Բնակչության քանակը (հազ.)	Նյութերի ֆոնային կոնցենտրացիաները, (մգ/մ ³)			
	Ընդհանուր փոշի	Ծծմբի երկօքսիդ	Ազոտի երկօքսիդ	Ածխածնի օքսիդ
50 -125	0,4	0,05	0,03	1,5
10 - 50	0,3	0,05	0,015	0,8
< 10	0,2	0,02	0,008	0,4

3.7 Սոցիալ-տնտեսական արդի վիճակը

Սպիտակ համայնքը հանդիսանում է խոշորացված համայնք համաձայն «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքների 2021 թվականի դեկտեմբերի 5-ին անցկացված ընտրությունների արդյունքները: Սպիտակ համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերն են՝ Արևաշող, Արջհովիտ, Գեղասար, Գոգարան, Լեռնանցք, Լեռնավան, Լուսաղբյուր, Խնկոյան, Ծաղկաբեր, Կաթնաջուր, Հարթագյուղ, Մեծ Պարնի, Նոր Խաչակապ, Շենավան, Շիրակամուտ, Ջրաշեն, Սարալանջ, Սարահարթ, Սարամեջ, Քարաձոր: Համայնքի կենտրոն է հանդիսանում Սպիտակ քաղաքը:

Սպիտակը գտնվում է Վանաձոր-Գյումրի և Վանաձոր-Երևան ավտոմոբիլային մայրուղիների խաչմերուկներում, Փամբակի հովտում, Փամբակ գետի և դրա վտակ Ջրաշենի ափերին, ծովի մակերևույթից 1550 մ բարձրության վրա: Հեռավորությունը մարզկենտրոնից 19 կմ է, իսկ մայրաքաղաքից 97 կմ: Համայնքի վարչական տարածքը 61531.36 հա է: Սպիտակի տարածքը լեռնային է, հյուսիսում ձգվում են Բագումի, իսկ հարավում Փամբակի լեռնաշղթաները: Ռելիեֆն ունի երոզիոն-դենուդացիոն կառուցվածք: Տարածքի երկրաբանական կառուցվածքը բարդ է, ձևավորված է նստավածքային հրաբխածին, ներժայթքային ապարներից՝ կրաքարեր, տուֆածին ապարներ, բազալտ ու ավազաքարեր: Երկրաշարժաբանական առումով տարածքը համարվում է սեյսմիկ ակտիվ գոտի՝ աղետաբեր երկրաշարժի բարձր հավանականությամբ (9 և ավելի բալ) : Սպիտակի տարածքով անցնում է Թբիլիսի-Վանաձոր-Սպիտակ-Մասիս երկաթգիծը:

Սպիտակ համայնքի տարածքը գտնվում է բարեխառն կլիմայական գոտում: Ձմեռը մեղմ է, ամառը՝ չափավոր տաք: Ամենացածր ամսեկան միջին ջերմաստիճանը հունվարին է՝ -30C, նվազագույնը՝

-35C, ամենատաք ամիսը հուլիսն է՝ +38C է, առավելագույնը +40C: Միջին հաշվով 0C-ից բարձր ջերմաստիճանով օրերի թիվը Սպիտակ քաղաքում կազմում է 270 օր: Տարեկան տեղումների միջին մակարդակը 500-550մմ է, գոլորշունակությունը՝ 900 մմ: Չնածածկույթի միջին հաստությունը 18-20 սանտիմետր է, ձնածածկույթով օրերի թիվը՝ 75-80:

Սպիտակի տարածքը եղել է հին բնակատեղի, որի պատմությունը սկսվում է դեռևս մ.թ.ա. IV-I հազարամյակներից: Սպիտակում, համանուն նախկին շրջանի Մեծ Պարնի, Ջրաշեն, Գոգարան, Արևաշող գյուղերում հայտնաբերված նեոլիթյան գործիքներն ու կենցաղային իրերը՝ քարե հատիչները, կացինները, դանակները, նետասլաքները, աղորիքները, արձանիկները և գտնված մյուս առարկաները վկայում են այդ ցեղերի հասարակական բարձր աստիճանը:

Սպիտակում՝ Սարդարի կոնդ բլուրում հայտնաբերվել են բրոնզե դարաշրջանի (ք.ա. 3-2-րդ հազարամյակում) բնորոշ առարկաներ՝ պղնձե և բրոնզե նետասլաքներ, դաշույններ, սև փայլեցրած կավախեցե ամաններ և այլ առարկաներ: Տարածքի բնակիչների կյանքը վերընթաց զարգացում է ապրել նաև ք.ա. 1-ին հազարամյակում, երբ այդ տարածքը մտել է Ուրարտու պետության կազմի մեջ (ք.ա. 7-րդ դար):

Երվանդունիների (ք.ա. 4-2-րդ դարեր) և Արտաշեսյանների (ք.ա. 2-1-ին դարեր) թագավորության ժամանակ նաև Մալիտակի այժմյան տարածքը եղել է Հայաստանի, ավելի ուշ՝ Մեծ Հայքի Գուգարք նահանգի Տաշիր գավառի կազմում: 9-րդ դարավերջին մտել է Բագրատունյաց թագավորության, 972-1118թթ.-ը՝ Կյուրիկյան թագավորության, իսկ 12-րդ դարավերջից՝ Մելիտոսյան թուրքերից ազատագրված հայկական հողերի հետ՝ Զաքարյանների իշխանապետության մեջ: 14-18-րդ դարերում Արևելյան Հայաստանի հյուսիս-արևելյան մի քանի գավառակների հետ միացվել է Ռուսաստանին, տարածքը կոչվել է Համամլուի գավառակ և մտել նախ Լոռի-Փամբակի, ապա՝ Ալեքսանդրապոլի գավառի մեջ: Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մալիտակ քաղաքը մինչև 1949թ. կոչվել է «Համամլու» կամ «Համամլի», որը հավանաբար առաջացել է պարսկերեն «համամ» (բաղնիք) բառից: Համամլուի նոր անունը՝ Մալիտակ, կապված է քաղաքի շրջակայքում եղած կրաքարի հանքերի հետ: Համամլուի շրջանը, որպես վարչական միավոր ստեղծվել է 1937թ. դեկտեմբերի 31-ին: Մալիտակը 1960թ.-ին ստացել է քաղաքի, 1971թ.-ին՝ հանրապետության ենթակայության քաղաքի կարգավիճակ: Համամլիում դեռևս 19-րդ դարի կեսերից գործել են ծխական դպրոցներ: Նախասովետական Համամլուն, բացի մի քանի դարբնոցից, ջրաղացներից ու ձիթահանքից, արդյունաբերական ոչ մի ձեռնարկություն չուներ: Բնակիչները հիմնականում զբաղվում էին երկրագործությամբ ու անասնապահությամբ: Բնակավայրի արտադրական առաջին ձեռնարկությունը՝ պանրի գործարանը, կառուցվել է 1937թ.-ին: 1947թ. առաջին արտադրանքն է տվել շաքարի գործարանը, որն արտադրական յուրաքանչյուր սեզոնում վերամշակում էր 130 հազար տոննա շաքարի ճակնդեղ, արտադրում 14 հազար տոննա բարձրորակ շաքարավազ: Հետագայում կոմբինատի կարգավիճակ ստացած ձեռնարկության մեջ ներառված կիտրոնաթթվի արտադրամասի թանկարժեք արտադրանքն առաքվում էր ոչ միայն Խորհրդային Միության հանրապետություններ, այլև արտասահմանյան մի շարք երկրներ: Արտասահմանյան 21 երկիր (Ռումինիա, Իրաք, Վիետնամ, Մոնղոլիա, Թուրքիա, Կուբա, Մալի և այլն) և սովետմիության մի շարք խոշոր քաղաքներ էին արտահանվում «Հայվերելակմեքենա» միավորման մարդատար և բեռնատար վերելակներ: Այստեղ աշխատող բանվոր ծառայողների թիվը հասնում էր 700-ի: Գործում էր Հացամթերքի կոմբինատը, կարի արտադրական միավորումը, տրիկոտաժի, կոշիկի ֆաբրիկաները, ռետինատեխնիկական իրերի և հացի գործարանները: Մինչև 1988թ.-ի դեկտեմբերի 7-ի աղետալի երկրաշարժը Մալիտակը արդյունաբերական և գյուղատնտեսական զարգացած քաղաքներից էր, որտեղ գործում էր 14 արդյունաբերական ձեռնարկություն: Ուներ 7 հանրակրթական, գեղարվեստի, երաժշտական, մարզական դպրոցներ, տեխնիկում, պրոֆտեխուսումնարան, 10 մսուր-մանկապարտեզ, հիվանդանոց, զբոսայգի, մշակույթի տուն, գրադարան, կինոթատրոն, թանգարան, մարզադաշտ, կապի հանգույց, տպարան:

Մալիտակցին երախտագիտությամբ է հիշում բարի կամք դրսևորած բոլոր երկրներին ու ժողովուրդներին, սփյուռքի մեր հայրենակիցներին, անհատ մարդկանց ու կազմակերպություններին, ովքեր իրենց անգնահատելի օգնությունն ու աջակցությունը բերեցին երկրաշարժի հետևանքների վերացման, ավերված քաղաքի վերականգնման գործին:

Բարեկամ ժողովուրդների օգնությամբ վեր հառնած Սպիտակն այսօրվա իր տեսքով, թաղամասերի անվանումներով ժողովուրդների բարեկամության իրական խորհրդանիշ է:

Չնայած նրան, որ Սպիտակում վերականգնողական մեծ աշխատանքներ են կատարվել (վերականգնվել ու գործում են բոլոր հանրակրթական, երաժշտական, գեղարվեստի և մարզական դպրոցները, բուժհաստատությունները, սպասարկման ոլորտի շատ կազմակերպություններ, վերականգնվել է բնակֆոնդի մի մասը), սակայն մինչև օրս վերացված չեն սարսափելի աղետի հետևանքները, դեռևս ամբողջովին լուծված չէ անօթևան բնակիչներին բնակարանով ապահովման խնդիրը, կան չլուծված սոցիալ-տնտեսական բազում խնդիրներ՝ փողոցների բարեկարգում և լուսավորություն, ոռոգման, խմելու ջրի ջրագծերի, կոյուղագծերի կառուցում և վերանորոգում: Սպիտակում խիստ կարևորվում է աշխատատեղերի ստեղծման խնդիրը:

1. Պատմական և մշակութային արժեքներ

Համայնքում գտնվում են 128 պատմաճարտարապետական և հնագիտական հուշարձաններ, ընդգրկված են ՀՀ մշակույթի նախարարության պատմամշակութային հուշարձանների պահպանության ցանկում:

2. Ժողովրդագրություն և սոցիալական կազմ

Համայնքի մշտական բնակչության թվաքանակը ՀՀ Ոստիկանության ԱՎԿ Սպիտակի անձնագրային բաժնի կողմից սփառվելով 2022 թվականի հունվարի 1-ի դրությամբ կազմել է 43460 մարդ:

3. Գործող կազմակերպություններ

h/h	Արտադրական ձեռնարկության անվանումը	Հասցեն	Գործունեության բնագավառը	Ձեռնարկության/կազմակերպության առկա իրավիճակը գործում է/ չի գործում
1.	«Մ. Լամբարյան» ՍՊԸ	Ք. Սպիտակ, Ս.Ավետիսյան 274	քաղաքացիական շինարարություն	գործում
2.	«ՕՍՏ- շին» ՍՊԸ	Ք. Սպիտակ, Թորոսյան 8	քարաքացիական շինարարությւն	գործում է
3.	«ՄԱՀԱԿՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ	Ք. Սպիտակ, Ս.Ավետիսյան 43	քաղաքացիական շինարարություն, ճանապարհաշինություն, էլեկտրահաղորդման և հեռահաղորդակցական համակարգերի շինարարություն	գործում է
4.	«Սպիտակի թոչնաբուժական ֆաբրիկա» ՍՊԸ	Ք. Սպիտակ, Շիրակի խճ. 144	ընտանի թոչունների բուժում, հավի մսամթերքի արտադրություն	գործում է
5.	«Սպիտակի թոչնաբուժական կոմբինատ» ՍՊԸ	Ք.Սպիտակ, Այգեստան 47/5	կերերի արտադրություն	գործում է

6.	«Մոնոլիտ Սպիտակ» ՍՊԸ	Ք.Սպիտակ, Գյումրիի խճ. 36	բետոնե հավաքովի շինարարական կոնստրուկցիաների արտադրություն	գործում է
7.	«Սպիտակ» նոտարական տարածք	Ք. Սպիտակ, Ս. Ավետիսյան 17բ/1	նոտարական ծառայություն	գործում է
8.	Կադաստրի կոմիտե	Ք.Սպիտակ, Շահումյան փ. 7 շենք	պետական կառավարչական հիմնարկ	գործում է
9	«Պիրզաձոր» ՍՊԸ	Նոր Խաչակապ	հանքարդյունաբերական արտադրամաս	գործում է
10	<<Տարիել>> ՍՊԸ	Ք. Սպիտակ,	հյուրանոց	Գործում է

4. Առողջապահական հաստատություններ

Համայնքում գործում է **«Սպիտակի բժշկական կենտրոն» ՓԲԸ**, որը համայնքի բնակչության առողջապահական սպասարկումը իրականացնում է երկու մասնաշենքերում, /հիվանդանոցային և պոլիկլինիկական/ արհեստավարժ բուժական անձնակազմի օգնությամբ: /բժիշկներ՝ 52 և 105 միջին բուժանձնակազմ/: Մասնաշենքերը գտնվում են լավ վիճակում /հնարավորության դեպքում կարելի է կատարել պոլիկլինիկական մասնաշենքի առաստաղի մասնակի վերանորոգում/, ջեռուցվում են: Հիվանդանոցն ունի սոմատիկ, վիրաբուժական, մանկաբարձա-գինեկոլոգիական, ինֆեկցիոն բաժանմունքներ, դիագնոստիկ ախտորոշիչ բաժին, շտապ բուժօգնության ենթակայան: 2016թ. հունիսից ԲԿ-ում գործում է նաև ժամանակակից ակնաբանական կենտրոնը:

Համայնքում գործում են 7 դեղատներ: Բժշկական ծառայություն է մատուցվում նաև **«Ռեցեպտոր»** առողջապահական կենտրոնի /2 բժիշկ, 2 բուժքույր, 1 բժշկի օգնական: **«Հույս Հայաստան հիմնադրամ»**-ի բժշկական բարեգործական կենտրոնի /4 բժիշկ, 3 բուժքույր, 2 օժանդակ աշխատակից/ կողմից: Համայնքապետարանի և **«Խնամք» ՀԿ**-ի համագործակցությամբ Իտալական թաղամասում կառուցվել, գույքով համալրվել է և 2016թ ապրիլից գործում է խնամքի կենտրոնը՝ հոգեկան խնդիրներ ունեցող մարդկանց համար, որտեղ աշխատում է 12 մարդ:

Համայնքում գործում են նաև առողջապահական ՊՈԱԿ-ներ՝ **«Արևաշողի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ**, անձնակազմը՝ 7, մատուցվող ծառայությունը՝ ամբուլատոր պոլիկլինիկական և առողջության առաջնային պահպանում:

Սպասարկվող ազգաբնակչության թիվը՝ 2756 մարդ: **«Ջրաշենի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ**, անձնակազմը՝ 16, սպասարկվող ազգաբնակչության թիվը՝ 6239 մարդ: Սպասարկում է Սարամեջի և Լեռնավանի ԲՄԿ-ները /բուժականանկաբարձական կետեր/:

«Մեծ Պարնիի առողջության կենտրոն» ՊՈԱԿ, անձնակազմը՝ 38, իրականացնում է ամբուլատոր պոլիկլինիկական ծառայություն: Սպասարկվող ազգաբնակչության թիվը՝ 11012 մարդ: Սպասարկում է Ծաղկաբերի, Խնկոյանի, Լուսաղբյուրի, Գեղասարի, Սարահարթի, Շիրակամուտի, Գոգարանի, Կաթնաջուրի, Սարալանջի Հարթագյուղի ԲՄԿ-ները /բուժականանկաբարձական կետեր/:

5. Աշխատանք և սոցիալական ծառայություն

Համայնքում կա 23529 աշխատունակ մարդ, որոնցից մշտական աշխատանքով զբաղված են միայն 5976-ը, 2021 անձ որպես գործազուրկ գրանցված են Սպիտակի զբաղվածության տարածքային կենտրոնում:

Համայնքի 5312 ընտանիքներից 2879-ը հաշվառված են ընտանեկան նպաստի պետական համակարգում, որոնցից սոցիալապես անապահովության նպաստառու է գնահատվել 2362 ընտանիք: Համայնքում բնակվում է 4152 հաշմանդամ, միակողմանի ծնողազուրկ՝ 104 երեխա, երկկողմանի ծնողազուրկ՝ 9 երեխա:

Համայնքում պետական և համայնքային սոցիալական ծրագրերի իրականացումը միտված է համայնքի կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված անձանց սոցիալական պաշտպանությանը, սոցիալական ռիսկերի աստիճանական կրճատմանը: Համայնքում սոցիալապես խոցելի ընտանիքներն իրենց բազմաբնույթ սոցիալ-առողջապահական խնդիրներով բազմաթիվ են: Պետական պատվերի շրջանակներում համայնքի բնակիչներին շոշափելի սոցիալական ծառայություններ մատուցվում են հիմնականում Սպիտակի ՄՕՏԳ-ի կողմից: Կշարունակվի Սպիտակի համայնքապետարանի և սոցիալ բարեգործական հասարակական կազմակերպությունների հետ համագործակցությունը, որոնց արդյունքում նախատեսվում է կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված սոցիալապես անապահով, բազմանդամ, բազմազավակ ընտանիքներին, կերակրող կորցրած, միայնակ մոր կարգավիճակ, հաշմանդամության խումբ ունեցող անձանց սննդի (1730 ընտանիք), 1550 դպրոցահասակ երեխաներին՝ հագուստի, կոշիկների, գրենական պիտույքների, 1115 միայնակ ծերերին՝ ձմեռային տաք կոշիկների, հագուստի, անկողնային պարագաների:

Շահագործված մշակութային (թանգարաններ, գրադարաններ) և մարզական նշանակություն ունեցող (մարզադպրոցներ, մարզադահլիճներ) շենքերն ու շինությունները հարմարեցված են հաշմանդամություն ունեցող անձանց համար: Հաշմանդամություն ունեցող անձինք մասնակցություն ունեն մշակութային, մարզական-մասսայական ծրագրերին: Համայնքապետարանի կողմից յուրաքանչյուր տարի 2մլն 850 հազար դրամ է կներդրվի «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության հետ համատեղ իրականացվող Սպիտակ համայնքի սոցիալապես անապահով տարեցների, հաշմանդամների և այլ անապահով խավերի (58 շահառու) առաջնային սոցիալական խնդիրների լուծմանն ուղղված ծրագրին (սնունդ, բուժօգնություն, իրավական և այլ խորհրդատվություններ):

6. Տրանսպորտ, ճանապարհային տնտեսություն

Սպիտակ համայնքը գտնվում է տրանսպորտային ցանցով առավել ապահովված գոտում: Սպիտակ համայնքի վարչական տարածքով են անցնում Վրաստանի, Ռուսաստանի /Երևան- Գյումրի-Սպիտակ-Վանաձոր-Մ՛ոսկվա/ և Թուրքիայի հետ կապող երկաթուղիները, Մ-3 «Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման» և Մ-7 «Մ-3- Սպիտակ-Գյումրի-Թուրքիայի սահման» միջպետական նշանակության ավտոճանապարհները: Սպիտակ քաղաքը բնակավայրերի հետ կապված է տեղական նշանակության ճանապարհներով:

Համայնքում գոյություն ունի 31 ավտոմոբիլային միաթռիչք և 3 երկաթուղային միաթռիչք բավարար տեխնիկական վիճակի կամուրջներ:

Համայնքում 2022թ.հունվարի 1-ի դրությամբ գրանցված է 6751 անձնական և 1796 արտադրական ձեռնարկությունների ավտոմոբիլ: Սպիտակ համայնքում գործում են թվով 5 միկրոավտոբուսային երթուղիներ և հասարակական տրանսպորտի սպասարկման 27 կանգառներ:

Նշված երթուղիները պայմանագրային հիմունքներով սպասարկում են երթուղիների սպասարկման իրավունքի հատկացման համար անցկացված մրցույթներում հաղթող ճանաչված 2 մասնավոր կազմակերպություններ:

Ներհամայնքային գրունտային փողոցներում պարբերաբար իրականացվում են նորոգման աշխատանքներ:

2022 թվականի ընթացքում համայնքում իրականացվում են փողոցների ասֆալտ/բետոնե ծածկույթի վերականգնման աշխատանքներ:

2022 թվականի ընթացքում Սպիտակ համայնքի մի շարք բնակավայրերում նախատեսվում է ներբնակավայրային ճանապարհների տուֆով սալարկման աշխատանքներ: Բացի այդ կատարվել են որոշ ներբնակավայրային ճանապարհների հիմնանորոգում:

Սպիտակ քաղաքում իրականացվել է ասֆալտապատ փողոցների գծանշման աշխատանքներ: Գծանշման աշխատանքներ պետք է իրականացվեն նաև Սպիտակ համայնքի բնակավայրերի ասֆալտապատ փողոցներում: Տեղադրվել են նոր ճանապարհային նշաններ և վերանորոգվել են հները:

3.8 Բնական և մշակութային ժառանգություն

Սպիտակ համայնքի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, որը 2002 թ. հաստատվել է Հայաստանի կառավարության կողմից: Ցանկում ներառված է ընդամենը 14 հուշարձան (11 միավոր):

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	կոորդ	համարանիշ	նշան.	հավելյալ նշումներ
Բնակատեղի	Ք.ա. 2 հզ	քաղաքի հս-աե մասում, Փամբակ գետի ձախ ափին, արևադարձային կոմբինատի դիմաց	—	7.6/1	Հ	
Դամբարանադաշտ	Ք.ա. 2 հզ	կոմբինատի տարածքում և շրջակայքում	—	7.6/1.2	Հ	
Բնակատեղի «Սարդարի բլուր»	Ք.ա. 3-1 հզ	քաղաքի ամ մասում	—	7.6/2	Հ	

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	կոորդ	համարանիշ	նշան.	հավելյալ նշումներ
(«Սարդարի կոնդ»)						
Գերեզմանոց	19-20 դդ.	Շահումյան փող.	—	7.6/3	S	
Գերեզմանոց	19-20 դդ.	N 1 դպրոցի մոտ	—	7.6/4	S	
Տապանաքար	1841 թ.		—	7.6/4.1	S	
Գյուղատեղի «Բակեր»	Ք.ա. 4-3 հզ, 15-16 դդ.	քաղաքի հվ մասում	—	7.6/5	Հ	«Գյոռներ» կոչվող վայրում
Գերեզմանոց	15-16 դդ.		—	7.6/5.1	S	
Դամբարանաբլուր	Ք.ա. 3 հզ, 2 կես	Սպիտակ-Վանաձոր ճանապարհի ձախ եզրին	—	7.6/6	Հ	
Եկեղեցի	2001 թ.	քաղաքի մեջ	—	7.6/7	Հ	Մբ. Հարություն եկեղեցին
Կամուրջ	19 դ.	քաղաքի մեջ, ավտոկայանից ոչ հեռու	—	7.6/8	S	միաթռիչք
Հուշարձան՝ Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին	1968 թ.	քաղաքային զբոսայգում	—	7.6/9	S	Ճարտ.՝ Գ. Գյուլխասյան
Հուշարձան Ալ. Մյասնիկյանի	1966 թ.	N 1 դպրոցի բակում	—	7.6/10	S	
Հուշարձան Դ. Տեր-Սիմոնյանի	1965 թ.	N 2 դպրոցի բակում	—	7.6/11	Հ	

4 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Շինարարական աշխատանքները պետք է կատարել պահպանելով պետ. նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները: Բոլոր տիպի թաքնված աշխատանքների համար պետք է կազմել թաքնված ախտաանքների ակտ տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից հաստատված:

Շին. հրապարակը կազմակերպելիս ղեկավարվել քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից հաստատված դրույթներով, շին. հրապարակի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Երեկոյան ժամերին դադարեցնել աղմկոտ աշխատանքների կատարումը:

4.2 Ռիսկերի գնահատում

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝

- փորման բեռնման աշխատանքների,
- հողային զանգվածների տեղափոխման,
- շինարարական տեխնիկայի շահագործման,
- ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման,
- բետոնային աշխատանքների հետ:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Սույն հայտում բերված են հիմնական բնապահպանական միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների:

4.3 Արտանետումների աղբյուրները

Ներկայացվող աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված են արտանետումների հետ, որոնց ցանկը բերված է ստորև՝

- փոշու արտանետումներ հիմքերի փորման ընթացքում
- ցեմենտի փոշու արտանետումներ, տարածքում նախատեսվող բետոնահանգույցից
- դիզելային վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ:

4.4 Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն

4.4.1 Մթնոլորտային օդ

Օդային ավազանը ադոտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- կառուցապատման ենթակա տարածքը ցանկապատել
- շինությունների ծածկում անթափանց թաղանփով, համապատասխան բարձրության
- շինարարական աշխատանքների /փոշի առաջացման աշխատանքներ/ ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ջրցան,
- պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգադրում:
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը պետք է իրականացվի փակ ծածկով մեքենաներով.
- իրականացնել շինտեխնիկայի անվադողերի լվացում շինհրապարակից դուրս գալուց առաջ
- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը:

4.4.2 Ջրային ռեսուրսներ

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- տարածքի հոսքերը կմիավորվեն մեկ բակային ցանցում և կմիացվեն սելավային ջրացանցին:
- անձրևվների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը կուղորդվեն պարզարան: Անձրևաջրերի նստեցման պարզարանը գտնվում է շինարարական հրապարակին կից, իրենից ներկայացնում է պլաստմասե 25խմ ծավալով տարողություն, որի ծավալը ընտրվել է հաշվի առնելով, որ շինարարական աշխատանքները միաժամանակ կիրականացվեն 500քմ մակերեսով տարածքի վրա: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինադր:

4.4.3 Հողային ռեսուրսներ

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.

- Շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- Հողի բերրի շերտը պահպանելու նպատակով նախատեսվում է առաջնորդվել ՀՀ կառավարության 08.09.2011թ.-ի թիվ 1396-Ն որոշմամբ հաստատված Հողի բերրի շերտի

օգտագործման կարգով և 02.12.2017թ.-ի թիվ N1404 որոշմամբ, մասնավորապես նախատեսել հետևյալ միջոցառումները.

- Հողի բերրի շերտը հանել և պահպանել ծածկված վիճակում՝ բացառելով շինարարական աշխատանքների հետևանքով դրա աղտոտումը:
- Հողային աշխատանքների կատարման ընթացքում չօգտագործված հողի հանված բերրի շերտն անմիջապես դարսվում է լայնակույտերով:
- Լայնակույտերի բարձրությունը և ձևը պետք է բացառի հողատարման գործընթացների զարգացումը:
- Եթե հողի հանված բերրի շերտը նախատեսվում է պահել 2 տարին գերազանցող ժամկետով, ապա, ողողումը և հողմատարումը կանխելու համար, լայնակույտերի մակերևույթն ու թեքությունները ամրացվում են խոտացանքով կամ այլ եղանակներով: Թույլատրվում է լայնակույտի թեքությունների վրա ցանքսը կատարել հիդրոտեղանակներով:
- Հողի հանված բերրի շերտը լայնակույտերում կարող է պահվել մինչև 20 տարի:
- Լայնակույտերը տեղադրվում են գյուղատնտեսության համար ոչ պիտանի տեղամասերում կամ ցածր արդյունավետություն ունեցող հանդակներում՝ բացառելով լայնակույտերի ջրածածկումը, աղակալումը, արդյունաբերական թափոններով և կոշտ առարկաներով, քարերով, խճով, ճալաքարով ու շինարարական աղբով աղտոտումը:

- Շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ:
- Այն հաստվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար պետք է տեղադրել ավագ կամ մանրախիճ: Այն դեպքերում, երբ մեքենաներից և սարքավորումներից կլինի վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսք, ապա պետք է փոված ավազը կամ մանրախիճը տեղափոխել համապատասխան աղբավայր և այն փոխարինել նորով:
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- տարածքը կբարեկարգվի և կմաքրվի շինաղբից:

4.4.4 Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներն են՝

- Հրդեհի առաջացումը
- Հեղուկ նյութերի արտահոսքը
- Աշխատողների վնասվածքները
- Շահագործվող տեխնիկայի հետ վթարները:

Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- Մինչ աշխատանքների սկիզբը ոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումը իրականացնում է աշխատանքների ղեկավարը:

- Մինչ աշխատանքների սկիզբը շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հազեցվում են հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղարկղիկով, իսկ աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում:

- Հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:

- Բոլոր աշխատողներին տրվելու են անհատական պաշտպանության միջոցներ: Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժօգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի քաղաքի մոտակա բժշկական հաստատությունը:

Ըստ նախնական գնահատման, ապահովվելով նշված միջոցառումների պատշաճ մակարդակով իրականացումը, կարելի է արտակարգ իրավիճակների ռիսկը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում արագ և արդյունավետ հակազդել դրանց:

4.4.5 Հակահրդեհային միջոցառումներ

ա) մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,

բ) հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ,

գ) շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:

դ) անբարենպաստ օդերևութաբանական պայմանների ժամանակ թույլ չտալ շինարարական տեխնիկայի գերբեռնված աշխատանք, խստորեն հետևել տեխնոլոգիայի ընթացակարգին, անդորրի պայմաններում դադարեցնել շինարարական տեխնիկայի աշխատանքը:

4.4.6 Աղմուկ և թրթռում

Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին և մակարդակներիչափագրումներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքի դեպքում:

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝

- խուսափել շինարարական գործողություններից, մեքենաների և սարքավորումների կայանելուց զգայուն ազդակակիրների հարևանությամբ, ինչպիսիք են մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, այլ հասարակական շենքերը;
- Աղմկահարույց աշխատանքներն հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին:
- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- շինարարական աշխատանքներում ներգրավել ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ, ինչպես նաև դրանք շահագործել տեխնիկական նորմալ վիճակում:
- պարբերաար ստուգել և կարգաերել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները, բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը
- շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին:
- Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով:

4.4.7 Բուսական աշխարհի պահպանության միջոցառումները

Անհետացման վտանգի տակ գտնվող, հազվագյուտ, պահպանության կարիք ունեցող բուսատեսակներին վնաս չի հասցվի, քանի որ նախագծով նախատեսված միջոցառումները իրագործվում են արդեն իսկ անտրոպոգեն ազդեցության ենթարկված տարածքներում՝ տարածքը հարթեցված է երկու հարթակների տեսքով ավելի քան 40 տարի առաջ:

Նոր կառուցապատվող տարածքների շինարարական աշխատանքների արդյունքում տեղի կունենա հողի բերրի շերտերի մասնակի վնասում (կառուցման փուլում), հողային զանգվածների փորման, հանման և տեղափոխման հետ կապված փոշու արտանետումներ: շինարարական տեխնիկայի շահագործման հետևանքով առաջացած այրման արգասիքներ և աղմուկ: Ազդեցությունների նվազեցումը կարելի է ապահովել իրականացնելով մի շարք բնապահպանական միջոցառումներ և կազմակերպելով աշխատանքների մոնիթորինգ:

Հողածածկին պատճառված վնասները նվազագույնին հասցնելու նպատակով նախատեսված է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

- շինարարության ընթացքում տարածքի բուսահողը հանվելու և կույտավորվելու է պաշտպանված վայրերում, հետագայում այն օգտագործվելու է տեղանքի բարեկարգման համար,
- ապահովելու են անհրաժեշտ պայմաններ, որպեսզի հանված բուսահողը չխառնվի գրունտի հետ և չաղտոտվի ,

- ջրային և հողմնային հողատարումից զերծ պահելու համար պահեստավորված հողաթմբերը ծածկվում են խոտաբույսերով կամ իրականացվում են այլ միջոցառումներ՝ հողաթմբերի ամրացում, ծածկում և այլն:
- բուսահողի պահեստավորման համար ընտրվելու է շինարարական հրապարակից դուրս տեղակայված վայր:
- շինարարության ավարտից հետո հանված բուսահողը օգտագործվելու է տարածքի կանաչապատման նպատակով:
- կառուցապատումից ազատ տարածքում նախատեսվում է իրականացնել կանաչապատում համաձայն կանաչապատման նախագծի:
- Կանաչապատումը կիրականացվի առաջնորդվելով ՀՀ կառավարության 2018թ փետրվարի 8-ի N 108-Ն որոշման դրույթներով:

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող 1300 խմ ծավալով հողի բերրի շերտը կկուտակվի տարածքում պահպանելու նպատակով: Բերրի շերտի հանումը, տեղափոխումը, պահեստավորումը և հետագա օգտագործումը իրականացվելու է համաձայն ՀՀ կառավարության 2017թ նոյեմբերի N1404 :

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքի մաքրում աղբից, կեղտոտված բնահողից, վառելիքաքսուկային նյութերից: Շինարարական աղբը և մնացած թափոնները տեղափոխվելու են տեղական մարմինների կողմից հատկացված աղբավայրեր: Այդ նպատակով մինչև գործունեության սկսելը համայնքապետին կներկայացվի համապատասխան հայտ, կհամաձայնացվի աղբի տեղափոխման վայրերը:

4.4.8 Կենդանական աշխարհի պահպանության միջոցառումներ

Կենդանական աշխարհի վրա հնարավոր ազդեցությունը նվազագույնի հասցնելու նպատակով ամենաինտենսիվ շինարարական աշխատանքները կիրականացվեն ձվադրման և բնադրման ժամանակաշրջանից (ապրիլ-մայիս) դուրս:

Ընդհանուր առմամբ, շինարարական աշխատանքները կկրեն լոկալ և ժամանակավոր բնույթ, ինչի շնորհիվ կենդանիներին հասցվող վնասը կլինի նվազագույն: Շինարարական աշխատանքների բնույթը և մասշտաբը այնպիսին են, որ նրանք իրենց փոքրածավալության պատճառով չեն կարող արգելել կենդանական աշխարհի ներկայացուցիչների սեզոնային միգրացիայի կամ ջուր խմելու ճանապարհները:

4.4.9 Թափոնների կառավարում

Արտադրական օբյեկտի կառուցման ընթացքում թափոնների ճիշտ կառավարման համար կարևոր են հետևյալ միջոցառումների իրականացումը.

- Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար:
- Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից
- Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները կրկնակի օգտագործել
- Անհրաժեշտ է մշակել և իրականացնել վտանգավոր նյութերի հետ անվտանգ կերպով վարվելու և պահեստավորելու ընթացակարգերը;
- Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում;
- Վտանգավոր Արտահոսքերի դեպքում, անմիջապես կլանիչ նյութով պետք է մաքրել առաջացած հետքերը

Արտադրական օբյեկտի կառուցման ընթացքում առաջացող շինարարական աղբն ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

4.4.10 Էներգախնայողության միջոցառումներ

Էներգախնայողության նպատակով շինություններում նախատեսված են հետևյալ միջոցառումները

- Ջերմային կորուստների նվազեցման նպատակով խողովակաշարերի և օդատարների համար կիրառվում են բարձր արդյունավետության ջերմամեկուսիչներ
- Արտաքին կոնստրուկցիաների ջերմամեկուսացում.
- Օդատարների ջերմամեկուսացում ժամանակակից ջերմամեկուսիչ նյութերով.
- Ջերմային կորուստների նվազեցման նպատակով կիրառվում են բարձր արդյունավետության ջերմամեկուսիչներ /пеноплекс/:
- Օդափոխության համակարգում բարձր արդյունավետությամբ ղեկավարվող ջերմափոխանակիչների կիրառում:

5 ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ

Արտադրական օբյեկտի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx և այլն) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, ամիսը մեկ անգամ հաճախականությամբ:

2. Փոշենաստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ:
3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ
4. Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ ամիսը մեկ անգամ հաճախականությամբ
5. Կենսաբազմազանության մշտադիտարկումներ՝ տարեկան մեկ անգամ

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է տարեկան մասնահանել 350 հազ. դրամ, ամբողջ շինարարության ընթացքում 700 հազ. դրամ:

Շինարարական աշխատանքների ընթացքում կիրականացվեն մշտադիտարկումներ ուղղված շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանման:

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	ՊԱՐԱՄԵՏՐԵՐ	ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻԿ
Ընդհանուր դրույթներ	Նախագգուշացումներ և աշխատողների անվտանգություն	(a) Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները և համայնքը պետք է նախագգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ (b) Շինարարության համար անհրաժեշտ բոլոր պահանջվող թույլտվությունները ձեռք են բերվել (c) Կապալառուն պաշտոնապես համաձայնել է, որ աշխատանքները կիրականացվեն ապահով և կարգապահ՝ նվազագույնի հասցնելով ազդեցությունը հարևան տնտեսությունների և շրջակա միջավայրի վրա: (d) Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ) (e) Շինարարակույմ տեղադրվող համապատասխան տեղեկատվական վահանակները աշխատողներին կիրազեկեն հիմնական կանոնների և նորմերի վերաբերյալ:
Շինարարական աշխատանքներ	Օդի որակ	(a) Շինաշխատանքների իրականացման ընթացքում հատուկ տարողություններ կկիրառվեն շինարարական աղբի հեռացման համար՝ Նշված տարողությունները պետք է պահպանվեն տարածքում և անընդհատ ցողվեն ջրով՝ թափոններից գոյացած փոշու քանակը նվազեցնելու նպատակով (b) Շրջակա տարածքները (մայթերը, ճանապարհները) պետք է զերծ պահվեն շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով (c) Շինարարական տրանսպորտային միջոցների պարապուրդ շինարարակույմ չի թույլատրվի:
	Աղմուկ	(a) Շինարարական աշխատանքներից գոյացած աղմուկը կսամանափակվի թույլատրված ժամերի միջակայքում (b) Շինարարական աշխատանքների ընթացքում շարժիչների, օդի կոմպրեսորների և էլեկտրականությամբ սնվող սարքերը պետք է ծածկվեն:
	Թափոնների կառավարում	(a) Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար: (b) Շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինարարակույմ և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր: (c) Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից (d) Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով, նախատեսվածին համաձայն (e) Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները բազմանվազ օգտագործել
Կեղտաջրերի հեռացում	Ջրի որակ	(a) Շինարարական անձնակազմը կօգտվի գոյություն ունեցող կենցաղային միջոցներից, կոյուղաջրերի հեռացումը շինարարակից պետք է իրականացվի ընդհանուր կոյուղու համակարգի միջոցով,

		<p>(b) Շինարարական տրանսպորտային միջոցները և սարքավորումները պետք է լվացվեն շինհրապարակից դուրս , համայնքում գործող մասնագիտացված կետերում:</p>
<p>Հետիոտների և երթևեկության ապահովություն</p> <p>Տրանսպորտային սպառնացող ուղղակի կամ անուղղակի վտանգներ</p> <p>Տրանսպորտային սպառնացող ուղղակի կամ անուղղակի վտանգներ</p> <p>Տարածքի բարեկարգում/ կանաչապատում</p> <p>Աղմուկի և թրթռումների կառավարում</p>	<p>Շինարարական աշխատանքների հետևանքով հետիոտներին կամ հանրային տրանսպորտին սպառնացող ուղղակի կամ անուղղակի վտանգներ</p>	<p>(a) Շինարարության ազգային նորմերի համաձայն կապալառուն պետք է ապահովի պատշաճ անվտանգություն և շինարարությանն առնչվող երթևեկության կարգավորում, ինչը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով.</p> <ul style="list-style-type: none"> ▪ պարզ տեսանելի ցուցանակներ, զգուշացնող նշաններ շինհրապարակում հանրությանը պտտենցյալ վտանգների մասին նախազգուշացնելու համար, պետք է առկա լինեն պատնեշներ և շրջանցող ուղիներ ▪ Անձնակազմի կրթման համակարգ և երթևեկության կառավարման համակարգ, հատկապես՝ շինհրապարակ մուտք գործելու և հարակից տարածքում ծանր տրանսպորտի համար: Հետիոտների համար անվտանգ անցումներ երթևեկության զոնայում: ▪ Համապատասխանեցնել աշխատանքային ժամերը երթևեկության ակտիվության հետ, խուսափել ակտիվ երթևեկությունից՝ մարդկանց ակտիվ տեղաշարժի ժամերին: ▪ Երթևեկության ակտիվ կառավարում շինհրապարակում փորձված և երևացող անձնակազմի կողմից, եթե վերջինս անհրաժեշտ է մարդկանց ապահով և հարմար անցուղարձի համար. ▪ Պետք է ապահովվի ապահով և շարունակական մոտեցում դեպի գործող գրասենյակային շինությունները, խանութները և բնակելի շինությունները շինարարական աշխատանքների ընթացքում <p>- կատարել կանաչապատ-ման/բարեկարգման աշխատանքները՝ համաձայն նախագծի բարեկարգման պլանների;</p> <p>- ձեռնարկել տնկված թփերի և խոտածածկի պահպանումը և մոնիտորինգը՝ բուսականության բարձր աճն ապահովելու համար</p> <p>- Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին և մակարդակներիչափազրույմներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքի դեպքում</p> <p>- Անհրաժեշտ է խուսափել շինարարական գործողություններից, մեքենաների և սարքավորումների կայանելուց զգայուն ազդակակիրների հարևանությամբ, ինչպիսիք են մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, այլ հասարակական շենքերը,</p> <p>- Աղմկահարույց աշխատանքները անհրաժեշտ է հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին,</p> <p>- Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով:</p> <p>- Անհրաժեշտ է բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը;</p>

<p>թափոնների կառավարում</p>	<p>Շին աղբի տեղադրում անհամապատասխան վայրերում;</p> <p>Վառելիքի, յուղի կամ այլ թունավոր նյութերի արտահոսքի պատճառով</p> <p>հնարավոր է վտանգավոր նյութերի թափանցում հողի մեջ</p>	<ul style="list-style-type: none"> - Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար: - շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր: - Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից - Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով, նախատեսվածին համաձայն - Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները կրկնակի օգտագործել - Անհրաժեշտ է մշակել և իրականացնել վտանգավոր նյութերի հետ անվտանգ կերպով վարվելու և պահեստավորելու ընթացակարգերը <p>Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում;</p> <ul style="list-style-type: none"> - Արտահոսքերի դեպքում, անմիջապես կլանիչ նյութով պետք է մաքրել առաջացած հետքերը հողի հնարավոր աղտոտումը կանխելու համար; <ul style="list-style-type: none"> - շինարարության ընթացքում տարածքի բուսահողը հանվելու և կույտավորվելու է պաշտպանված վայրերում, հետագայում այն օգտագործվելու է տեղանքի բարեկարգման համար, - ապահովելու են անհրաժեշտ պայմաններ, որպեսզի հանված բուսահողը չխառնվի գրունտի հետ և չաղտոտվի , - ջրային և հողմնային հողատարումից զերծ պահելու համար պահեստավորված հողաթմբերը ծածկվում են խոտաբույսերով կամ իրականացվում են այլ միջոցառումներ՝ հողաթմբերի ամրացում, ծածկում և այլն: - բուսահողի պահեստավորման համար ընտրվելու է շինարարական հրապարակից դուրս տեղակայված վայր: - շինարարության ավարտից հետո հանված բուսահողը օգտագործվելու է տարածքի կանաչապատման նպատակով:
<p>կենսաբազմազանության պահպանություն</p>		

		<p>- կառուցապատումից ազատ տարածքում նախատեսվում է իրականացնել կանաչապատում համաձայն կանաչապատման նախագծի:</p> <p>- Կանաչապատումը կիրականացվի առաջնորդվելով ՀՀ կառավարության 2018թ փետրվարի 8-ի N 108-Ն որոշման դրույթներով:</p> <p>Կենդանական աշխարհի վրա հնարավոր ազդեցությունը նվազագույնի հասցնելու նպատակով ամենախնտենսիվ շինարարական աշխատանքները կիրականացվեն ձվադրման և բնադրման ժամանակաշրջանից (ապրիլ-մայիս) դուրս:</p>
--	--	--

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ

Գործողություն	Նվազեցնող միջոցառումներ	Որտեղ իրականացնել	Ինչպես իրականացնել	Ժամանակամիջոց	Կատարող
Շինանյութերի մատակարարում	Շինանյութերի գնում արտոնագրված մատակարարներից	Մատակակարի հիմնարկում կամ պահեստում	Փաստաթղթերի ստուգում	Մատակարարման պայմանագրերը կնքելու ընթացքում	Կապալառու
Շինանյութերի և թափոնների տեղափոխում Շինարարական տեխնիկայի տեղաշարժ	<ul style="list-style-type: none"> - Մեքենաների և տեխնիկայի համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում - Բեռնատարերի բեռնվածության սահմանափակում հերթականության ապահովմամբ - Տեղափոխումների ժամանակացույցի և երթուղիների պահպանում 	<ul style="list-style-type: none"> - Շինհրապարակ - Շինանյութերի և աղբի տեղափոխման երթուղիներ 	Շինհրապարակ տանող ճանապարհների ստուգում	Աշխատանքային ժամերին և դրանցից դուրս անսպասելի ստուգումների իրականացում	Կապալառու
Շինարարական տեխնիկայի շահագործում տեղամասում	<ul style="list-style-type: none"> - Մեքենաների և տեխնիկայի լվացումը պետք է կատարվի շինհրապարակից դուրս , համայնքում գործող մասնագիտացված կետերում - Տեխնիկական միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումը պետք է իրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում 	Մասնագիտացված կետ	Գործընթացների գործունեության ստուգում	Մեխանիզմների շահագործման ընթացքում	Կապալառու
Հողային աշխատանքներ	- Հանված հողերը հեռացվում են համայնքի կողմից հատկացված վայր	Շինհրապարակ	Գործընթացների ստուգում	Հողային աշխատանքների ընթացքում	Կապալառու

Իներտ շինանյութերի գնում	- Շինանյութերի գնում վստահելի մատակարարներից	Իներտ նյութերի պահեստ	Փաստաթղթերի ստուգում Գործընթացների ստուգում	Մատակարարման ընթացքում	Կապալառու, մատակարար
Կենցաղային աղբի առաջացում	- Աղբամանների տեղադրում շինարարական հրապարակում - համայնքի թույլտվություն աղբի մշտական տեղակայման վերաբերյալ	Շինհրապարակ	Արտաքին գնում	Շինարարության ողջ ընթացքում	Կապալառու, քաղաքապետարանի վերահսկողություն
Աշխատանքի անվտանգություն	- Անձնակազմի ապահովում արտահագուստով և անձնական պաշտպանիչ միջոցներով - Շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանություն	Շինհրապարակ	Ստուգման գործընթացներ	Աշխատանքների ողջ ընթացքում	Կապալառու, պատվիրատու
Տարածքի Կանաչապատում, բարեկարգում Վտանգավոր նյութերի և թափոնների կառավարում	Տեղանքին բնորոշ ծառաթփային բուսականության Թփերի և այլ բուսականության նորմալ աճ վառելիքի, յուղերի և այլ թունավոր նյութերի պատահական կամ մշտապես տեղի ունեցող արտահոսքեր	Կառուցապատվող հողամաս Շինհրապարակ	Կանաչապատման բոլոր տեղամասերը Արտաքին գնում Արտաքին գնում	Շինարարության Ավարտին Շինարարության ընթացքում	Կապալառու, Կապալառու,

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

